№ 253 ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՈՒՐԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17 № 253

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴՐԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ"

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՑ **1907** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 բուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազմանալ և Բարենկայա փողոցների անկիւնը)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գիտել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ.

Թիֆլիսում, լոյս երկուշաբթի գիշերվայ 1 ժամին ի Տէր հանգեալ

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍ. ՍԵԴՐԱԿԵԱՆ

Ամփոփը ամեն օր, երեկոյեան ժամի 7-ին, էջմիածնապատկան տունը, Վանքի եկեղեցուն կից։ Թաղումը կիրակի օրը, ամսոյ 19-ին։ (ա.օ.) 3—6

Հայկական Դեմոկրատական Կուսակցութեան Ժամանակաւոր Կենտրոնական Բիւրոն

Յայտարարելով կուսակցութիւնը կազմված՝ համաձայն առաջին ընդհանուր ժողովի որոշման, հրաւիրում է իր գեկլարացիայի մէջ յայտարարված սկզբունքների համակրողներին՝ համախմբվել և կազմել տեղական ճիւղեր իր կօմիտէներով և այդ մասին յայտնել կենտրոնական բիւրոյին։

Ժամանակաւոր բիւրոյի անդամները՝—Ս. Յարութիւնեան, բժիշկ Կ. Ստեփանեան, Այէք. Քալանթար, Հ. Առաքելեան, Յ. Սպէնդիարեան, Բ. Վէրմիշեան, Մելք. Աթաբէկեան, բժիշկ Բ. Աղասարեան, բժ. Տ. Գէորգէրեան, Յ. Ղուկասեան, Լ. Դանիէլեան, բժ. Մ. Մովսիսեան, Արշ. Մխիթարեան։

առ. (ա. օ.) 3—10

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎՍԱՐԱՆ

Շաբաթ, Նոյեմբերի 18-ին

Անդամների, կանդիդատների և նրանց ընտանիքների համար վրաց դրամատիկական ընկերութեան արտիստները

կը ներկայացնեն

„ԱՌԱՋԻՆ ՁԱՆՁ"

կոմեդիա 3 գործ. փոխադրութիւն Վ. Գունդայի

Մասնակցում է ամբողջ խումբը։

Գները 1 բուբլուց մինչև 30 կոպէկ։

Հիւրերը ընդհանուր հիմունքների համաձայն լրացուցիչ վճար տալիս են՝ տոմսարկիկ 1 ր., կանայք 50 կոպէկ։

Նուագում են սարունների օրկեստրը և սպանդարներ։ առ. 1—2

ՄԱՍՆԱԳԷՏ ՔԻՆԻՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵԿԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Ֆ. Ի. ԲՈՒՐԴԷՆԿՈ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ՁՈՒՐՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ԵԱՆՁԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բերանի, չորեքշաբ., ուրբ., կիր. 2—3 ժ.

Բժ. Վ. Վ. ԶԼՈՒԿՈՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍԳԻՊՈՎ.—Քթի, բերանի և ականջի, երկ. երեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիվանդով ամենայն օր 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏԵՐԱՁԷ.—Կաշուն, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

Բժ. Վ. Ի. ԻՆԱԵՎ.—Ներքին, ամենայն օր 1—2 ժ., ուրբաթ 3—4 ժ.

Բժ. Ա. Ա. ՄՕՆՆԷ.—Ներքին, երես. երեք., հինգ., շաբ. 4—5 ժ.

Բժ. Ա. Տ. ԲՕԶՄԱՅԿՈՎԱ.—Երես., չորեք., շաբ. 11—12 ժ. երկ., ուրբ. 1—2 ժ.

Բժ. Ն. Ի. ՆԵՌՈՒՏՄԻՆ.—Աչքի, երկ., երեք., չոր., ուրբ., շաբ., 11—12 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երես., չոր., կիր. 12—1 ժ., երեք., ուրբ. 1—2 ժ.

Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՈՐՕՎ.—Ատամի հիւ. 11—1 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ
Բժ. Կ. Ի. ԶՈՒՐՆՕՎՍԿԻ } Կլինիքական անալիզ
Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՈ.—Բժշկ. գիմն. մասաժ, ելեկտր. 4—6 ժամ.

Բժշկական խորհուրդներ, մասաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնոզել, ատամների և ծառների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 5—144

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Սանահին ամարանոցում, Ալավերդի պատգիրքայի մօտ, Կարսի երկաթուղու գծի վրա, Բէյազէտ գետի երկրութեամբ ընկած և չը վաճառված՝

Ամարանոցի հողաբաժինները

Դիմել (կարելի է և գրաւոր) Թիֆլիս, Վեր-լիկօկնաժէսկի փողոց, տ. № 18, Մուրադ Օգանէզովին—փայտի պահեստում։

(ու. կ.) առ. 1—2

Բ Ժ Ի Շ Կ

Տ. Ա. Իսահակեան

ՄԱՍՆԱԳԷՏ

ներքին եւ վեներական հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 11—1 ժ. երեկոյեան 5—7 ժ.

Սօլոլակ, Սերգիեվսկայա 15, Փրիդսնօվի տունը։

առ. (չ. ու. շ.) 9—100

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեղական զեմստվային ինքնավարութեան հարցը, Վերջին տեղեկութիւններ. Ցաւակցական հեռագիրներ. Պատգամաւորութիւններ. Պէտք է փութացնել. Պատգամաւորութիւն Փոխարքայի մօտ հայոց Բարեգործական Ընկերութեան մասին. Մամուլ. Ընտրութիւնների առաջ. Շարժումներ և հեռանքներ. Մպիրիտ դաշնակիցներ. Բարձրագոյն գպրոցներում. Ուկրայնայի արտասական կուսակցութեան պլատֆորմմ. Գրագիտութեան տարածող մանուկական ընկերութեան բացումը. Բողոքներ. Գրական շանտաժ. Այսուհետև ինչ պէտք է հնարենք. Մի բացատրութիւն. Բաց նամակ Կարապետ վարդապետին. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր,—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՏԵՂԱԿԱՆ ԶԵՄՍՏՎԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

I

Անցողական այն շրջանը, որի մէջ մենք ապրում ենք, չը տուեց մինչև այժմ դրական մեծ հետեւանքներ, իսկ միևնոյն ժամանակ մի քանի խնդիրներ, որոնք համարվում էին հասեմատաբար հեշտ լուծելի և առաջ էին մղված տարիներ առաջ, նրանք էլ ընեցին և կարծես մոռացվեցին։

Այդպիսի խնդիրների թւին է պատկանում տեղական զեմստվային ինքնավարութեան խնդիրը։ Նա յետ մղվեց առելի խոշոր քաղաքացիական բարեփոխութիւնների արշալոյսի առաջ։ Բայց նա կարևոր խնդիր էր, չէր կարող մոռացութեան տրվել և պէտք է նորից խօսեցնել տար իր մասին։

II

Մեր երկրի ամեն մի անկիւնը ամեն մի կարևոր վարչական և կուլտուրական դարձ ձեռնարկելու ժամանակ զգում է տեղական ինքնավարութեան բացակայութիւնը։

Երկիրը և ժողովուրդը գործ և կանոնաւոր գործավարութիւն են պահանջում. իսկ հին վարչական սիստեմը, եթէ առաջ էլ մեծ թերութիւններ ունէր, այժմ ներկայանում է իբրև բոլորովին մնանկ և անզօր որևէ արդիւնաւէտ գործ առաջացնելու համար։

Առանց տեղական ժողովրդի աջակցութեան այլ ևս անկարելի է երևակայել բեղմնաւոր կեանք և գործունեութիւն։

III

Տեղական ինքնավարութեան հարցը արդէն բաւական մշակված և ուսումնասիրված գործ է։

Երկրի ամեն կողմերից կան հաւաքված բազմաթիւ ցուցումներ, նկատողութիւններ և ծրագիրներ, որոնք լուսաբանում են տեղական ազգաբնակութեան կարիքները և հայեացքները զեմստվային կազմակերպութեան մասին։

Այդ նիւթը կարող է հիմք ծառայել կարճ միջոցում ծրագրելու զեմստվային կանոնադրութիւն Անդրկովկասի համար և մտցնել գործնական կեանքի մէջ։

IV

Ցանկալի է, որ զեմստվային ինքնավարութեան հարցը հանդէս գար այն լիակատարութեամբ, որին արժանի է մի այդպիսի հիմնական և խոշոր հասատութիւն։

Շարունակել ադմինիստրատիական գործավարութիւնը այլ ևս անկարելի է։ կեանքը չափազանց խիստ տուժում է և ամեն օրվայ տխուր երևոյթները ցոյց են տալիս, որ այլ ևս ուշացնել տեղական ինքնավարութեան բեմքորմը անհնարին է։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Զիբրայիլ (Կարեազ. գաւ.), 3 Նոյեմբերի

Անցեալ Նոյեմբեր ամսի 30-ին Զիբրայիլ ժամանեց մի կօմիսիա—բաղկացած՝ պ. գաւառապետ Յմբալովից, կարեազինում գտնվող հետեակ և արտիլերիայի զօրքերի հրամանատար օֆիցէրներից, որը գեներալ-նահանգապետի կարգութեամբ եկել էր որոշելու այն բոլոր գիւղացիների կարիքները, որոնք վրնավել են Թուրք-հայական անմիտ կոտորածներից և զեկուցանելու գեն.-նահանգապետին, օգնութիւն հասցնելու նպատակով։ Միւս օրը վնասված հայերին և Թուրքերին կանչելով առանձին-առանձին հարցրին նրանց կարիքների մասին։ Գիւղացիք, որովհետև ուելի մեծ կարիք ունէին հացի և սերմացուի մէջ, ուստի և յայտնեցին հաց ու սերմացու բաժանելու անհրաժեշտութեան մասին։ Ցուցակագրելով յիշեալ գիւղացիների պահանջները, երեք օրից յետոյ վերադարձան Կարեազին զիւղը։ Բացի այդ, յայտնեցին Թուրքերին և հայերին, որ այն գիւղերը կամ անհասները, որոնք չեն վճարի թէ արքունի բոլոր հարկերը և թէ կալուածատէրերինը, կենթարկվեն տուգանքի և խիստ կը պատժվեն էկզեկուցիայի միջոցով։ Սիրտ առած այս կարգադրութիւնից մի քանի կալուածատէրեր և բէգեր, ադմինիստրացիայի աղնութեամբ սկսել են իրանց տասանորդական բաժինները հաւաքել անկանոնաբար։

Անցեալ օրը Բանազուր հայ գիւղը կօզակներ ուղարկվեցին կալուածատէր Հասան-աղայի «մալՁոթը» հաւաքելու. շատ գիւղացիների էլ կանչեցին, Զիբրայիլում տուցան «մալՁոթը»։ Գեներալ-նահանգապետը տուգանքի է ենթարկել մի քանի հայ գիւղեր և կարգադրել այդ գիւղերից գէնքերը ժողովելու և, ինչպէս պատմեցին, մի քանի գիւղից տուցել են արդէն թէ տուգանքը և թէ գէնքերը։

Զիբրայիլում և նրա շրջակայքում ծաղիկ հիւանդութիւնը մեծ ծաւալով տարածվել է, այնպէս որ օր չէ անցնում առանց մահվան դէպքի։ Բժշկական օգնութիւնը խստագոյն բացակայում է։ Մի կողմից հացի պակասութիւնն է ժողովրդին նեղացնում, միւս կողմից էլ ծաղիկ հիւանդութիւնը, որին զոհ են գնում ամեն օր տասնեակ երեխաներ։—Թուրքերի և հայերի յարաբերութիւնները լաւ են։

Ուսանող Պողոսեան

Բարանունջ, 3 Նոյեմբերի

Անցեալ ամսի 14-ին գրած էինք, որ Շուշի են ուղևորվել քառասունի չափ քարանունջցիք գեներալ-նահանգապետին ներկայանալու ու գիւղի անմեղութիւնը խոստովանելու նպատակով. գեներալը լսելով պատգամաւորների արտասուաքամն ու արդար բողոքը, յարգել է նրանց խնդիրը։

«Ուրեմն այլևս Քարանունջի համար մտածելու կարիք չը կայ, քանի որ էկզէկուցիան վերցրված է նրանցից», զուցէ կասեն շատերը։

Բայց ոչ, այդ սխալ է, որովհետև էկզէկուցիան է վերցրված, իսկ ասվը գնա մնում է. այս, առաջինին լիապէս յաջողող է նշանակված երկրորդը, որը սոսկալի աւերածութիւններ է գուշակում։

Գիւղացիք ճնշված վերջին անհամեմատ ծանր ծախքերի տակ, ոչ մի ելք չեն գտնում նրանցից ազատվելու—այս դէպքում նրանք միայն մի բան գիտեն, այն է ծախել ունեցած չունեցածը՝ տաւար, ոչխար, թէկուզ հէց մի հատ ճար ու ճարակ լինկան եղը. ծանր հանգամանքների ազդեցութեան տակ նա չէ կարողանում մտածել, որ գարնանը լըծկան եղը չը պիտի ունենայ. և այսպէս առանց հեռուն մտածելու, նա զատարկում է գոմը, տանը, միայն թէ կարողանայ սև, չոր հացով կերակրել անմիխթար երեխաներին։

Այո, անմիխթար բառի բուն իմաստով։

Մեր հասարակութիւնը այլևս կորցրել է իր հաւատը դէպի այն միաքը, որ իբր թէ հայը հային օգնում է. նա ասում է. 105 անից բաղկացած գիւղը ենթարկվեց ամբողջ 16 օր սարսափելի էկզէկուցիայի, ծայրայեղ քայքայվեց անտեսապէս, մարդիկ մնացին կատարեալ քաղցած—արդեօք որ հայը մտածեց օգնութիւն հասցնել կարճ ժամանակում խպառ մնանկացած գիւղին, որ հայը մտածեց ուղարկել յատկապէս այդ գիւղի համար մի քանի պուդ ալիւր, որ հայը ձեռք մեկնեց նիւթական օգնութեան նպատակով։

Ես չեմ կարողանում ժողովել անգութ բծաւոր տիֆին նորերս զոհ գնացած հանգուցեալ նորընծայ քահանայ Ներսէս Բաղրեանի վերջին օրերի խօսքերը. «Ցաւը միայն երկու օրվայ հաց ունիմ, գիւղից այլևս ոչ ցորենի և ոչ մի կօպէկի յոյս ունիմ. (խօսքը Քարանունջի մասին է, որտեղ հանգուցեալը քահանայ էր) ինչ անեմ, որ գնամ, ուրեմն մեզ մահ է սպառնում»։

Ահա ինչ վիճակի հասաւ մեր հասարակութիւնը իր Թանկագին քահանայով։ Վերջինի կարծիքը շատ ճիշտ էր. նա մեռաւ և ազատվեց հայրական պարտաւորութիւնից, իսկ նրա երեխաներին սով է սպառնում։

Կրճատելով ցաւոտ խօսքերս, պարտք եմ համարում որպէս նոյն հասարակութեան անդամ՝ յիշեցնել պարտաճանաչ և ունեոր մարդկանց, մանաւանդ տեղական նպաստամատոյց յանձնաժողովին, քանի որ ուշ չէ աշխատեն հեռացնել մեր ժողովրդից այն կարծիքը—որ հայը հային չէ օգնում։

Յ. Գրիգորեան

Էջմիածին, 13 Նոյեմբերի

Այսօր ես պատահաբար ներկայ եղայ Նորին Սրբութեան ունեցած խօսակցութեանը սինոդի պրոկուրօրի հետ, որի ժամանակ Կաթողիկոսը լիապօրութիւն տուեց պրոկուրօրին կարգադրել, որ իր—Կաթողիկոսի վրա ոչ մի բռնութիւն ոչ ոք չէ գործել և չէր էլ կարող գործել, ինչպէս որ այդ լաւ յայտնի պէտք է լինի և պրոկուրօրին։

Այդ խօսակցութեանը ներկայ էր և Կաթողիկոսի դիւանապետ Մելիք-Թանգեան վարդապետը։

Գարեգին Ենգիբարեան

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Զարջուլից, 15 Նոյեմբերի

Անկաշառ, անձնուէր հոգևոր հովիւ և բեղմնաւոր եռանդուն հասարակական գործչի՝ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանի մահը անհուն վիշտ պատճառեց Զարջուլի հայ հասարակութեան։ Թող նրա անունը յաւերժանայ այն բացառիկ արժանաւորութիւններով, որոնցով նա կուռում էր խաւարի դէմ և այն լուսաւոր սերմերով, որ նրա հոգը ձեռքը ցանեց մեր սրտերում։

Ներսէս քահանայ Աբրահամեան, Մարտիրոս Դանիէլեան, Գրիգոր Աստրեան, Տէր-Գալատեանց, Շամխալ Պետրոսեան, Ստեփան Բուտումեանց, Յովհաննէս Բաբախանեան, Աթանէս Արզումանեան, Իսրայէլ Գասպարեանց, Արտէմ Տէր-Պետրոսեանց, Կոստանդ Ադասիեան, Յովսէփ Հայրապետեան, Ստեփան Մուրադեան, Խաչատուր Սարգսեան, Գրիգոր Հայրապետեան, Գրիգոր Մխիթարեան, Ալէքսանդր Յարութիւնեան, Գերասիմ Գրիգորեան, Սիմէօն Դանիէլեան, Արշակ Յարութիւնեան, Լևոն Պետրոսեան, Աւետիս Մելիք-Շահնազարեան, Ներսէս Գէորգեան, Գաբրիել Շարիեան, Գրիգոր Ստեփանեան, Սիմէօն Թադէոսեան, Սարգիս Նարիեանեան, եղբ. Մուղունեան, Վերդի Աղաբաբեան, Եղիշէ Սայեամեան, Գերասիմ Յարութիւնեան, Միքայէլ Պետրոսեան, Լևոն Գոգեան։

Սարմալերից, 15 Նոյեմբերի

Յարգոյների մի խմբի կողմից և անձնապէս մեր կողմից արտայայտում ենք անկեղծ ցաւակցութեան զգացումն հայոց եկեղեցու խորապէս յարգված և վեհապէս շիտակ արժանաւոր արքեպիսկոպոս Սեդրակեանի մահվան առիթով։

Զաւադ բէգ Բալուլեան, Առաքել Օհանեան

Արմաւիրից, 15 Նոյեմբերի

Արմաւիրի հայ հասարակութեան կողմից և անձամբ արտայայտում եմ խորին ցաւակցութեան զգացումն Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանի՝ հայոց եկեղեցու պատկառելի հովիւի մահվան առիթով։

Հայոց վօլօսնոյ աւագ՝ Գրիգոր Կուսիկեան

Սեվաստօպոլից, 15 Նոյեմբերի

Խորապէս վշտացած թանկագին անմոռանալի հովապետ Արիստակէս Սեդրակեանի վաղաժամ մահվամբ, Սեվաստօպոլի հայ հասարակութիւնը ուղարկում է իր ցաւակցութիւնը։

Երեցփոխ՝ Կարապետեան, հոգաբարձուներ՝ Դրգունօվ, Նստոր Կարակաշ

Դերբենդից, 15 Նոյեմբերի

Հոգեկան կսկիծով կարդալով Արիստակէս արքեպիսկոպոսի մահվան լուրը, արտայայտում ենք մեր ցաւակցութիւնը։

Եղբարք Շահիշանեանցներ

Մօսկվայից, 15 Նոյեմբերի

Շատերը խորապէս վշտացած են արժանաւոր հովապետի մահվամբ։ Կիրակի օր հանդիսաւոր հոգեհանդիստ, որի ժամանակ կարտասանվեն և ճառեր։ Պատկերի փոխարէն աւելի պատշաճ է յաւերժացնել Սեդրակեանի յիշատակը մի բարի գործով նրա հայրենիքում։

Պրոֆէսսոր Խալաթեան

Բագուից, 15 Նոյեմբերի

Բագուի հայ հասարակութիւնը համակված է վշտով՝ հայրենի եկեղեցուն և ժողովրդի մատուցած ծառայութիւնների համար բոլոր հայերից յարգված արքեպիսկոպոս Արիստակէսի վաղաժամ մահվան տխուր լուրով։ Հանգիստ նրա աճիւններին։ Վախճանվից մի արքեպիսկոպոս, բայց հայ ժողովուրդը չի մոռանայ՝ իբրև մարդասէր, իր պատգամաւորութեան և ժողովրդին անձնուէր գործիչ։ Բազուի հայ հասարակութիւնը ընտրեց իրան ներկայացուցիչներ հանգուցեալի թաղման ժամանակ Գասպար Տէր-Մարգարեանցը և Լևոն Ղուլեանին։

Բ. Գոլուխանեան

Գանձակից, 15 Նոյեմբերի

Գանձակի հայ հասարակութիւնը արտայայտում է խորին ցաւակցութիւն արժանաւորագոյն, անփոխարինելի հովիւ Սեդրակեանի մահվան առիթով։ Ներկայացուցիչներ թաղման ժամանակ ընտրված են պ. պ. Սիմէօն Աթանասեան և բժ. Սամ. Շահպարոնեան։

(Նամակով)

Փոթիից, 15 Նոյեմբերի

Խնդրում ենք Փոթիի մի խումբ հայերս տպագրէք մեր ցաւակցական նամակը, որով մենք մեր խորին ցաւակցութիւնը յայտնում ենք մեր անմոռանալի՝ նախկին թեմական առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանի մահվան առիթով, որ տեղի ունեցաւ լոյս երկուշաբթի ժամը մէկին։ Հանգիստ հայրենասէր և ճշմարիտ հոգևորականի աճիւններին, յիշելով Եղիշէ մատենագրի խօսքերը՝ «Մահ իմացեալ անմոռնութիւն է, մահ ոչ իմացեալ մահ է»։

Ի դիմաց ժողովրդի՝

Յարութիւն Պանաղեանց

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զանազան քաղաքներից հետզհետէ պատգամաւորներ են գալիս՝ ներկայ լինելու Արիստակէս արքեպիսկոպոսի թաղմանը։ Էջմիածնի միաբանութեան կողմից պատգամաւորներ են եկել—Յուսիկ եպիսկոպոս, Մեսրոպ վ. Տէր-Մովսէսեան և Մխիթար վարդապետ Տէր-Մկրտչեան։ Յարիցինի հայ հասարակութեան կողմից՝ Սաեփանեան վարդապետ։ Վլադիկավկազից—գործակալ Սահակեան քահանայ, Սարգիս Իւղբաշեանց և Յովհաննէս Թադոսեան։ Գանձակից լինելու են—Սիմէօն Աթանասեան և բժշկ. Ս. Շահպարոնեան։ Բագուից՝ Գասպար Տէր Մարգարեան և Լևոն Ղուլեան։

ՊՍԱԿԻ ՓՈԽԱՐԷՆ

Բժշկապետ Յ. Գասպարեանցը ուղարկելով մեզ մի հարիւր բուբլի, խնդրում է այդ գումարը, փոխանակ պսակ դնելու Արիստակէս Սեդրակեանի դագաղի վրա, յատկացնել Շուշու տառապեալ ժողովրդի համար ցորեն գնելու։

ՊԷՏՔ Է ՓՈՒԹԱՑՆԵԼ

I

Մենք նորից յիշեցնում ենք մեր հասարակութեանը իր մեծ պարտաւորութեան մասին, որ նա ունի դէպի ազգի ենթարկված ժողովուրդը։

Զմեռը արդէն սկսվել է լեռնամասերում և կարօտեալ գիւղացին զգում է ցրտի և քաղցի տառապանքները։

Զմեռվայ պատճառով դժուարանում են երթևեկութիւնը և հաղորդակցութիւնը, դժուարանում է և մի ուրիշ գործի կատարումը։ Դա ցորեն ապալու գործն է։

Ով ծանօթ է գործական կեանքի հանգամանքների հետ, նա լաւ գիտէ, որ գիւղացու վեհաբուժ ցորեն ապալու հոգսը աշնանային և ձմեռային ամենամեծ հոգսերից մէկն է։

Պէտք է շուտ հասցնել ցորենը գիւղացու ձեռքը, որպէսզի նա միջոց ունենայ ժամանակին ապալու գործը վերջացնել և պատրաստ ալիւր ունենայ իր տանը։

II

Երբ ճանապարհները փակվին, շրջացները դադարեն գործելուց կամ չափազանց ծանրաբեռնված լինեն միաժամանակ հաւաքված ցորենով, անշուշտ լեռնաբնակ գիւղական ժողովրդի համար դժուարութիւններ կը ստեղծվեն օգտվելու այն նպաստներից, որոնք արված կը լինեն նուիրատուութիւնների կողմից։

Ահա ինչու պէտք է մենք փութացնենք մեր օգնութիւնը և աշխատենք ամենակարճ միջոցում հասցնել ցորենը դէպի կարօտեալ գիւղերը։

Ցորենի շուտ տեղ հասցնելը կունենայ և այն փրկարար նշանակութիւնը, որ կը ստիպէ տեղական ցորենավաճառներին հրապարակ հանելու իրանց ժամ եղած պաշարները և քայքայելու այն մենաւաճառութիւնը, որ ներկայումս գոյացել է գաւառական խուլ անկիւններում։

Իսկ ուշացնելով թէ օգնութիւնն ենք ուշացնում և թէ տեղական պայմանները դարձնում ենք անպատշաճ ազգաբնակութեան համար։

Ա. Քալանթար

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՄՕՏ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Երէկ, Նոյեմբերի 16-ին, ժամը 3-ին, յանձնարարութեամբ Հայոց Բարեգործական ընկերութեան վարչութեան, Ներկայացան Կովկասի Փոխարքային վարչութեան նախագահ Ս. Յարութիւնեան և անդամները Յ. Սպէնդիարեան և Մ. Աթաբէկեան՝ ընկերութեան նախկին 1881 թուականի կանոնադրութիւնը վերականգնելու համար։ Այդ կանոնադրութեան հիման վրա, ինչպէս յայտնի է, ընկերութիւնը ունէր Կովկասի գաւառներում 19 ճիւղեր, բայց իշխան Գոլիցինի նախաձեռնութեամբ կանոնադրութիւնը փոխվել էր և ընկերութեան իրաւասութիւնը սահմանափակվել էր Թիֆլիս քաղաքով, միայն հայ լուսաւորչականների վերաբերմամբ և զուտ նիւթական օժանդակութեամբ, առանց իրաւունք ունենալու գործելու ազգային լուսաւորութեան շրջանում։ Փոխարքային գիմումով իր խօսքը վարչութեան նախագահ Ս. Յարութիւնեան՝ հաստատ տեղեկութիւն տուեց խնդրի էութեան մասին, որին Փոխարքան, ընդունելով գրաւոր խնդիրը, սիրալիր կերպով պատասխանեց. «Ես պատրաստ եմ ամեն մի բարի ձեռնարկութեան աջակցել»։ Այնուհետև ընդունեց գրաւոր զեկուցագիրը, հին և նոր կանոնադրութիւնները ընկերութեան և ասաց, որ պատշաճաւոր կարգադրութիւն կանի խնդրագրի վերաբերմամբ։

ՄԱՄՈՒԼ

«Բազմավէպ» լրագրի մէջ կարդացինք, որ նորերս վախճանվել է յայտնի հայագէտ Փաուլ Ֆելիքէք, որ բազմաթիւ կարևոր աշխատութիւններ և ուսումնասիրութիւններ ունի հայագիտութեան վերաբերեալ, ինչպէս Մովսէս Խորենացու, Դողթան երգերի, Եղիշէի, Եզնիկի, Մար-Աբասի, Կորիւնի մասին։ Նա առաջինը եղաւ, որ հանճարեղ փաստերով ապացուցեց՝ թէ Ցանախապատումի հեղինակը ս. Մեսրոպն է և ոչ թէ ս. Գրիգոր Լուսաւորիչը։

Ֆելիքէքի աշխատութիւնները թարգմանված են Ցակոբոս վ. Տաշինի ձեռքով և հրատարակված Վիէննայի Մխիթարեանների «Ազգային Մատենադարանի» 17-րդ գրքի մէջ, 1895 թ.։

Եւրոպացի դիտնական հայագէտի մահը, անշուշտ, մեծ կորուստ է հայ գրականութեան համար։

*

Յայտնի հայ յեղափոխական գործիչ Մուրադը (հնչակեան) մի կոչ է հրատարակել «Հնչակի» մէջ, որով յորդոր է կարդում հայ յեղափոխական կազմակերպութիւններին մի ընդհանուր «հայ յեղափոխական կոնգրէս» կազմել՝ գալիք քաղաքական անհրաժեշտութիւններին միահամուռ ջանքերով դիմաւորելու համար։

Նոյն միտքն է յայտնում և «Դրօշակը» իր 10-րդ համարի մէջ, շեշտելով յեղափոխական-դիմադրական տարբերի համախմբման անհրաժեշտութիւնը։

Ահա ինչ է ասում թերթը.

«...Քաղաքական այդ նպատաւոր տազնապի հանդէպ՝ բոլոր դիմադիր և յեղափոխական տարբերը՝ թիւրք, հայ, ալբան, մակեդոն, յոյն, քիւրդ, չերքէզ, մի գերագոյն պարտք ունեն կատարելու,—պատրաստ լինել, պատրաստ՝ ծրագրով, պատրաստ՝ տաքտիքով, պատրաստ՝ շարժելու, պատրաստ՝ զարնելու...

Մին զանազանները, ողբն ու կոծը լրացրեան էջերում, ներքին թշնամութիւնն ու պառակտումները—յեղափոխական ակտեր չեն, և ոչ էլ լուրջ սպառնալիք՝ թշնամուն վախեցնելու։ Հարկաւոր են միաձայն, գործնական, խորակիտ միջոցներ. անհրաժեշտ է յեղափոխական քայլ ու մարտական ծրագիր...

Այդ վճռական քայլի նախապայմանութեան համար՝ լաւագոյն ճանապարհը այն է, որ փորձած է շատ անգամ և շատ երկնեռում,—խորհրդակցութեան կոչել բոլոր դիմադոյն խմբերը, դիմագրական թիւ յեղափոխական, և մի ընդհանուր կօնգրէի մէջ մշակել օրայ անյեռանգդիմ պահանջներ, որոնք պէտք է ներկայացնուին օսմանեան վարչական կառավարութեան, ինչպէս և այն զարձնական միջոցներ, որոնցով պէտք է սոփել գործադրեու այդ պահանջները։

Օսմանեան կայսրութեան տանջուած բոլոր ժողովուրդների ծոցից եկած քաղաքական դիմադիր խմբերի այդ կօնգրեն—օրայ պահանջն է, քաղաքական տարբերան հեռատեսութեան թելադրանքը, որից խոյս տալ կարող են միայն նրանք, որոնք ոչ ծրագիր ունին, ոչ հանրային նպատակ, ոչ էլ սոցիալական իդէալ»։

*

«Շարժում» թերթի խմբագիր պ. Վարդօի դէմ կատարած մահափորձի մասին «Ռազմիկ» թերթը (դաշնակցական) հաղորդելով այդ լուրը, իր կողմից հետեւեալ էջ գրել.

«Ծեծող երիտասարդներէն երկու հոգի պահպանուած կը տարուին, ուր կը խոստովանին թէ՝ իրենց այդ ընթացքը արդիւնք էր ժողովրդին ու իրենց ընկերներուն տարուն քրտինքով հաւաքուած 12,000 ֆրանկները յիշեալին կողմէ կոնդրդուած ըլլալուն համար զգացած իրենց խոր ցաւին ու զայրոյթին»։

Եւ աւելացրել՝

«Ոստիկանութիւնը քանի մը ժամ եաքը կարձակէ երիտասարդները՝ օրինակն պարզ հարցաքննութենէ մը անցնելով զանոնք։

Պուլկար ակնատես սպաներ և ժողովուրդն անհանութեամբ խօսած են հայերու մնուցած այս դէպքերուն մասին աւելցնելով որ, նմանօրինակ պարագաներու տակ իրենց աւելի խիստ կը վերաբերուէին։ Իսկ հայ հասարակութեան հետաքրքիր և ուշադիր այն տուար զանգուածը, որ ոտնակոխ եղած իր իրաւունքներուն ուրարքութիւններուն պատիւն հանդէպ նահանգադրութիւն մը ցոյց կուտայ, լաւ տպաւորուած կերևի իր ծոցէն դուրս պոռթկացող այդ անշահախնդիր երիտասարդներու ընթացքէն»։

Արդ, Վանայում հրատարակվող «Բաւունք» թերթը, առաջ բերելով «Ռազմիկ»-ի այդ յօդուածը, իր կողմից ասում է.

«Այս տողերէն աւելի մեղադրութեան հոտ կը բուրէ քան թէ ուղղամտութեան։ Վարդօյին 12,000 ֆր. կուսակցութեան գրեթէ չը յանձնելը գնի սպանելու ատելաձայն ձեւելու արդարացուցիչ պատճառ ցոյց կուտան։ Բայց չէ որ Դաշնակցութեան Պալկանեան շրջանակային ժողովը Վարդօյին խնդիրը ընդհ. Պատգամ. ժողովին կարգադրութեանը ձգած էր, և դեռ այդ Պատգամ. ժողովը չէ գումարուած. ալ ինչ պէտք կար կարգ մը միամիտներ գրգռելու և դաղելէ ու դատապարտելէ առաջ մարդուն գլուխը չանխնելու։ Կարելի է նա կարդարանար Պատգամ. ժողովին առջեւ։

Այս նկատումները մեզ սա կարծիքին կը տանին, թէ Վարդօյի վրա եղած յարձակումը դրամական խնդրէն աւելի անոր լիրզուն կարկեր նպատակաւ էր, որպէսզի չը խօսի Դաշնակցութեան ներքին ցաւերու մասին»։

Շատ ճիշտ է գուշակել «Իրաւունք» թերթը։ Դաշնակցական խուժանապետները իրանց հակառակորդներին և չարպորդութիւնները մերկացնողներին ուրիշ միջոց չունին, բացի սպառնալիք՝ սպանելու և ծեծելու։ Եւ այդպիսի մարդիկ դեռ յանդգնում են յայտնել, թէ իրանք որևէ դաղափարի են ծառայում։

*

«Իրաւունք» թերթը (№ 74) «Հայ խուլիգաններ» վերնագրով առանձնագրուն է տպել, որից քաղում ենք հետեւեալ կտորը.

Շատ տրիճներով կրնամ պէտք է ըլլանք թէ ժողովուրդի մը ազատութիւնն ձեռք բերելու նպատակաւ կազմակերպուած ոեւէ ընկերութեան և պատուոյ զգացում կրող ոեւէ անհատի համար՝ տարբերան բարոյականութեան դէմ դուսանքութիւն է ուրիշի մը խօսքի ու գաղափարի ազատութիւնը բիրտ ուժով բռնաբարել չանալը։

Սուլթաններու և ռուս պիւրոկրատիային տարուկ այն գործելակերպը՝ որով զարգացած ժողովուրդի մը դէմ քիւրտ սօքաճներ ու խուլիգաններ գործածեցին, դատապարտուած է աշխարհի ամեն կողմերէն և նոգեկանօք կը վիշուի ու պիտի յիշուի պատմութեան մէջ։

Եւ մտածել, թէ խօսքի, գրչի ու կեանքի, ազատութեան համար բողոքող, կռուող, հարիւր հազարաւոր եղբայրներ գոհ տուող, հայ ժողովուրդն ալ իր սօքաճները և խուլիգանները պիտի ունենայ, իր եղբօրը խօսքի, գրչի ու գաղափարի ազատութիւնը բռնաբարելու համար։

Ահա այդ ճանը կը հասնի կրկին Կովկասէն։ Այս անգամ յարձակումը յեղափոխական գործիչի «Փէտայիո»-ի կամ դրամատէրի վրա չէ, այլ խմբագիրներու և խմբագրատուներու վրա. յարձակողները ռուս սև հարիւրեակներ, խուլիգաններ կամ քիւրտ սօքաճներ ու թիւրք ճանքեպարներ չեն, այլ հայ ոչխարամիտներ թելադրուած հայ յեղափոխական վարիչներէ կամ մտաւորականներէ։

Բանի մը մարդիկ «Երկիրի» խմբագրատունը բացատրութիւն պահանջել կերթան, ուր ազուզկ կը բարձրանայ. երկիրականները այդ դէպքը մշակականներու կը վերագրեն. ուստի իրենց հետևորդներէն 5—6 հոգի նոյն օրը «Մշակի» խմբագրատունը կերթան ազմուկ կը հանեն ու սպառնալիք կը կարդան, «Երկիրը» լրագրի խմբագրութեան անունը կուտան ու կը հեռանան։

Զարդացման և ազատասիրական տեսակէտով՝ հայ հասարակութեանց մէջ իրենց առաջին տեղը տուող Տփղիսի մտաւորականներուն վերագրուած այս ազեղ դէպքերը շատ տխուր կաղդեն մեր վրայ։ Մեզ անհասկանալի կը թուի «Երկիրի» ամբաստանութիւնը թէ գործին մէջ «Մշակի» խմբագրութեան մասը կայ. «Մշակի» 34 տարուան գոյութիւնը բիրտ ուժ գործածելու նախընթաց մը չէ տուեր ցարդ. մշակականներու կուսակցը միմիայն գրչով ու խօսքով եղած են։ Իսկ «Երկիրի» վարիչները ընտրութիւններու, հանդանակութիւններու և այլնի մէջ սպառնալիք և բիրտ ուժ գործածելու շատ մը օրինակներ տուած ըլլալով, այս վերջին դէպքին համար ալ մեզ տարակուսանքի կը մատնեն թէ իրենք եղած չըլլան թելադրողները, մանաւանդ որ նոյն օրը «Մշակի» խմբագրատուն խուժողները «Երկիրի» խմբագրութեան անունը կուտան, և այդ խմբագրութիւնը իր սա տողերով արդէն կապառնայ որոշակի.

«...Երը մշակական ու միհրանական թայնով լցած մի փանատիկոս կը յանդգնի ձեռք բարձրացնել մեր գործիչներից որ և է մէկի վրայ,—այն օրը մենք չենք որ պատասխանատու կը լինինք մոլեղած ժողովրդի դատաստանի համար»։

«Մոլեղած ժողովրդի դատաստան...» Սուլթան Համիտն ալ ճիշտ այդ սպառնալիքը ցոյց կուտար դեսպաններուն, երբ ասուած հայ հասարակութեան նպաստաւոր դիմումներ ընէին. «իսլամ ժողովուրդը կը գրգռի, վերջը պատասխանատու չեմ ըլլար»։ Բայց ձեռքի տակէ գրգռողը միշտ ինքը եղած է։»

*

Ամսոյս 14-ից Թիֆլիսում սկսեց հրատարակվել «Հայկ» անունով մի նոր երգիծաբանական թերթ, տեսքով և արտաքինով գրեթէ նման «Խաթաբալային»։ Առայժմ որևէ կարծիք յայտնել նոր թերթի մասին չենք կարող, մինչև վերջնականապէս պարզվի նրա կերպարանքը։

*

«Զարկ» անունով շաբաթաթերթը, որ արդէն փողոցային զանազան ոճրագործութիւններով օժտված է, իր վերջին (№ 3) համարի մէջ թոյլ է տուել իրան զանազան ցնդաբանութիւններ և սպառնալիքներ «Մշակի» և նրա դեկավարների դէմ։ Պատասխանել այդպիսի մի փողոցային թերթի, որին համարձակ են յայտնում զանազան կ. Դիւզաղանեանները, օրիորդ Նունուֆարները, մենք, ի հարկէ, ոչ միտք ունենք և ոչ ժամանակ։ Սակայն մենք չենք կարող հրապարակի վրա չը դնել պ. Բալասանեանի մի աբաբը։ Պարոնը ուղղել է մեզ հետեւեալ նամակը, իբրև «Զարկի» խմբագիր.

«Մշակի» դեկավարներին.

«Մամբարութիւնս պարտք է համարում յայտնել ձեզ, որ մեր աշխատակից պ. Գր. Նիկողայոսեանի մի շարք յօդուածները լոյս են տեսնելու «Զարկի» № 4-ից սկսած ի Նպաստ դաշնակցականների, որովհետև «Զարկի» խմբագիրը ջերմ համակրող է այդ կազմակերպութեան, ինչպէս առանձին նամակով էլ ասիթ է ունեցել յայտնելու ձեզ, իսկ դուք սկսել էք, չը գիտենք ինչ հիմունքներից դրդված, մեր դէմ գրգռել։ Մենք վախեցող չենք, միայն իմացած լինէք, որ դուք ձեզ հակասում էք, մեր գործը «Մշակի» հետ է, որի դէմ չենք խնայելու բանակուռիչ ոգնիւ դնիքերով։ Ձեր պատի համար չենք հրատարակում մեզ ուղարկված անգին նիւթերը ձեր դէմ ուղղած, իսկ «Մշակի» դէմ հրատարակելու ենք։ Այժմ ինքներդ մտածեցէք և խոհեմ շարժվեցէք։ Ողջունում ենք ձեր քայլը, որ գաղարցրել էք բանակռիւը «Մշակի» դէմ։

Ձեր՝ Գ. Բալասանեան»

Կարծում ենք, որ այս նամակից յետոյ միայն մի բան կարող ենք մաղթել պ. Բալասանեանին... մտնել մի հիւանդանոց...

*

«Երկիրը» սատիկ իրարանցման մէջ է և իր այդ իրարանցումը արտայայտել է «Կոնդլոմերատ» առաջնորդող յօդուածի մէջ (№ 38)։ Ինչ որ շլուել լսելով, թէ կազմակերպվում է հայկական մի նոր քաղաքական կուսակցութիւն, «Երկրի» վարիչները, իբրև «իսկական հայ պատրիոտներ», որոնք իրանցից դուրս փրկութիւն չեն ճանաչում հայ ազգի համար, առանց սպասելու, որ նոր կուսակցութիւնը կազմվի, յայտարարել իր գոյութիւնը, հրատարակել իր ծրագիրը և գաղանները, շտապել են զոռալ, թէ «կազմվում է մի նոր հայազգի կուսակցութիւն»։

Առածն ասում է. «զոռ՝ սիրոց դոռ»։ Ինչ հարկ կայ այդքան վախենալու մի նոր կուսակցութիւնից, եթէ դուք, արդարև, համոզված էք, թէ ամբողջ հայ ժողովուրդը ձեր կողմն է, ձեր ետևից է գնալու, ինչպէս յուխտաւորը պարծենում էք նոյն յօդուածում։ Դուք զարհուրում էք դեռ չը ծնված մանուկից։ Եւ դա շատ հասկանալի է. դուք զգում էք ձեր մօտալուտ վախճանը. դուք տեսնում էք, որ հայ ժողովուրդը կարող է շատ հեշտութիւնամբ թողնել ձեզ, բանտեան և կեղեքիչների ներկայացուցիչներիդ, և հետևել մաքուր, շլտակ, իսկական ժողովրդասէր կուսակցութիւններին։ Բայց հանգստացէք. կարող ենք հաւատացնել ձեզ, որ նոր կուսակցութիւնը ամենևին նպատակ չունի կուռել Դաշնակցութեան դէմ, որովհետև վերջինս ինքն ըստինքեան կը մեռնէ, եթէ շարունակէ իր այժմեան կոլբատաբեր և վնասակար գործունէութիւնը։

*

Տեղական ռուս մամուլը շարունակում է զբաղվել Էջմիածնի խայտառակ դէպքերով։ «Голосъ Кавказа» թերթը (№ 165) մի առաջնորդող նուիրելով այդ դէպքերին, այսպէս է եզրափակում.

«Դէպքերը ունեն իրանց լոգիկան, և առանց պատճառների չէ կարող լինել և հետևանք։ Անաչառ քննութիւնը պէտք է իր լոյսը սփռէ այդ տգեղ պատմութեան վրա (Կաթողիկոսին անպատուելու և Սուքիասին խայտառակելու դէպքերը)։ Այդ գործում իր նախաձեռնութիւնը պէտք է ցոյց տայ ինտելլիգենցիան, որը չէ կարող մեռել անտարբեր ժողովրդական ոգու հանապազօրեայ կրօնական հարցերին։ Չէ կարելի զործը յետաձգել։ Քննութիւնը պէտք է սկսվի օրքան կարելի է շուտ և նրա փաստերը պէտք է լոյն հրատարակութիւն ստանան. դա է պահանջում թէ հայ ժողովրդի և թէ բոլոր մեր՝ կոլկացիներիս շահը։

*

Առաջ ենք բերում մի քանի կտոր այն տպագրած թռուցիկից, որ տարածվել է Թիֆլիսում.

«Սթափվիր հայ ժողովուրդ. քո անմեղ անունով ինչեր են կատարվում. այս մի տարի ի վեր դաշնակցական շէֆերի լարած ինտրիգաները առաջ բերին մի շարք քսանեցուցիչ տխուր դէպքեր, որով մեր դժբաղդ իրականութիւնը այսօր ներկայացնում է մի ծանր պատկեր, որի ընթացքում ինչեր առէք որ ամենատես չեղանք, որ կամայականութիւնը իր ամենածայրայեղ ատիճաններում արհամարհում և ոտնատակ է տալիս պարտք, իրաւունք և ամեն սրբութիւն...

Արևելեան բիւրօն դեռ ևս շարունակում է իր նենգամիտ դաւերը, կեղծ ու պատիր թռուցիկներով աքսում է ըստ կարելւոյն իր այլանդակ պատկերը թաղցնել։ Միւս կողմից էլ ցոյց տալ որ դեռ պահպանում է իր վարչական-բարոյական հեղինակութիւնը. սակայն յուսահատ դուր ձիգեր. ամեն ինչ պարզ դրված է հրապարակի վրա. արանից յետոյ ժողովրդին մոլորեցնելը անկարելի է։ Եւ ահա այս խայտառակ դրութիւնը միգմացնելու համար, բիւրօն իր յետին մրքերով դումարում է տաճկահայկական ժողովրդի, որը իր ժամանակին իսկոյն նկատվել էր. անկեղծութիւնը և բարոյական նշանակութիւնից զուրկ մի ժողով. այդ ասիթիւ բաց թողված թռուցիկների համաձայն, ամեն 500 հոգին մի մի ներկայացուցիչ էր ընտրելու, իսկ կարող վայրերից մի մի ընկերներ (պարգևաչ իր օգտին ծառայող). կամայականութեան այդ դրոշմը սկզբից և ետ բաւական չէր, բաւականն այն էր, որ Բաթումը չը կարողացաւ իր ընտրիչներին անցկացնել։ Ահա ձեզ ընտրողական իրաւունքների վրա բանութեան մի նմուշ, որի օրինակը մենք չը տեսանք Պեռական Դումայի ընտրութիւնների գործում։

Եւ այդպէս պարզվեց, որ տաճկահայկական համագումարը մի քանի հարգատ ձայներով պարզ ներկայացուցիչներ է ընդունում իր մէջ, իսկ մեացեալ բոլոր ճնշող մեծամասնութեամբ ընդունվում են կեղծ և ոչ լրացուցիչ ձայներով յայտնի վարձկաններ, որոնք նախագծի վրա խնամական հարգատ աչքերի մի թեթև ակնարկ գցելով անցնում են դատապարտելու ապատամբութիւնը և նմանապէս ապատամբութեան ձայնակցող ընդհանրութիւնը, անուանելով նրանց յետադէմ, հակայեղափոխական և դաւաճան. սատակ ներկայացուցիչները, զրկված խղճի զգացմունքից և մինչև իսկ մարդկային առողջ դատողութիւնից, խմբագրում են մի ցնոար թռուցիկ կարձելով, որ այդպիսով արդէն դրսվեց իր ընկած վարկը, չը նայած որ չէ կարձիքների տարբերութիւնը Պեռ. Դումա գնալու նպատակի վերաբերմամբ։

Հիմա էլ մեր «ծայրայեղները» գնում են, որ պէտք է անպատճառ գնալ Պեռ. Դումա մասին նրան խանգարելու, քանդելու, պայթեցնելու համար, քանի որ նրանք ամենևին յոյս չունեն, թէ այդ Դուման ձեռնհաս կը լինի որևէ օգտակար աշխատանք կատարելու և նա իբր թէ պիտի միայն մի անձայն գործիք լինի կառավարութեան ձեռքում հասարակաց կարծիքը և Եւրոպային խաբելու համար, թէ իր ցանկացած փոխառութիւնը ապրելու և թէ իր բոլոր կարգադրութիւնները անդիմադրելի կերպով Դումայի միջով անցկացնելով դրանց ժողովրդի ընտրեալների հաւանութեան արժանացած ցոյց տալով։

Ահա այս տեսակէտից մեկին քուէ տալուց առաջ անհրաժեշտ է նախապէս իմանալ թէ նա ինչ սկզբունքով է զեկավարվում, և եթէ նա համախտ է վերոյիշեալ կարծիքին, մենք գտնում ենք, որ այդպիսին չէ կարող իսկական արտայայտիչ լինել մեր ժողովրդի այժմեան իղձերի, արամադրութեան և նրան չը պէտք է ընտրել։

Կարծում ենք, հարկաւոր չէ երկար կանգ առնել ցոյց տալու մեր «ծայրայեղների» այդ յոռետես կարծիքի անհիմն լինելը, կասնք միայն հետեւեալը.

Ոչ մի հիմք չը կայ ենթադրելու թէ նոր Դումա հաստատելով կառավարութիւնը կը կարողանայ, եթէ իրօք այդ նրա նպատակն է, խաբել հասարակաց կարծիքը և մանաւանդ Եւրոպայի դրամատէրերին, ցոյց տալով իբր թէ հաստատել է ժողովրդական ներկայացուցչութիւն, երբ այժմ, արդէն անդրանիկ Դումայի տխուր վախճանից յետոյ, ամենքն էլ գիտեն, որ կառավարութիւնը, ինչպէս ցոյց տուեց փորձը, կարող է երբ ուզենայ ամենաուշը 24 ժամում փակել իր չը ցանկացած Դուման։ Ոչ ոք այնքան միամիտ չէ կարող լինել, որ իր միլիոնները բարեհաճի տալ միմիայն ի սէր այդ Դումայի, որի դրութիւնն այդպէս երերուն է ու անհաստատ։

Այդ բանը, կարծում ենք, մեր «ծայրայեղներից» մի քիչ աւելի լաւ գիտեն Եւրոպայում և սակայն նրանք միշտ էլ ախորժակով ասելիս են տալիս Ռուսաստանին մեծ գումարներ թէ անսասան միապետութեան օրերում, թէ երկիվայ յեղափոխական խառնակ շրջանում և թէ այժմեան ըէակցիայի ժամանակ... տալիս են նաև՝ որովհետև ստանում են շատ ձեռնտու պայմաններ և մեծ տոկոս և երկրորդ՝ որովհետև համոզված են որ իրանց դրամագլուխները չեն կորչի, քանի որ անշուշտ նրանց եռևը կանգնած է իրանց ամբողջ զինուորական ոյժը։

Այս էլ պէտք է ի նկատի ունենալ, որ եթէ կառավարութիւնը չը կարողանայ այդ ճանապարհով փոխառութիւններ կնքել, մինթէ նա չէ կարող փող ձեռք բերել ուրիշ միջոցներով, թէկուզ գրաւ դնելով իր երկաթուղիների եկամուտները, մաքսերի, ակցիզի դանձումը, արդիւնաբերութեան որոշ ճիւղերը և այլն. մինթէ դրա համար էլնա կարիք պէտք է ունենայ անպատճառ Դումա հաստատել...

Պեռական Դուման ոչ մի էական նշանակութիւն չունի փոխառութիւն կնքելու գործում։ Կառավարութիւնը այն ժամանակ միայն չէ կարող անել այդ բանը առանց Դումայի, կամ հակառակ նրան, երբ կը լինի սահմանադրական...

Նոյնպէս անհիմն է յոռետեսների և այն կարծիքը, թէ Դուման չը պիտի կարողանայ կռուել կառավարութեան ապօրինութիւնների դէմ, հնու գործիք պիտի դառնայ նրա ձեռքում և, որ աւելի վատն է, հաւանութիւն տալով այդ ամենին, իբրև ժողովրդի հաւատարմատար, այդպիսով օրինականութեան դրոշմ պիտի դնէ ժողովրդի շահերին հակառակ բոլոր կարգադրութիւնների վրա։

Այդպէս կարող է լինել զուցէ միայն այն դէպքում, երբ Ռուսաստանի բոլոր փոքր ի շատ պիտակից, մարանդող ազատերը ասպարէզից քաշվելով, ամբողջ Դուման, կամ նրա ճնշող մեծամասնութիւնը, կը կազմվի ծայրայեղ ազատկողմեաններից, թունդ պահպանողականներից։ Մինչդեռ անցեալ Դումայի թարմ օրինակը դեռ ինը աչքի առաջ է։ Կադետները, չը նայած իրանց չափաւոր ձախակողմեան ուղղութեան, խոհեմ ու տակտով գործունէութեամբ հանդիսացան կառավարութեան դէմ խիստ զօրեղ ու անկուն հակառակորդներ։

Փոքր ի շատէ օրինաւոր կազմ ունեցող Դումայի միջով անկարելի է անցկացնել որևէ հակաժողովրդական կարգադրութիւն։

Դուման խոնդարելը, կամ ինչպէս ասում են՝ «ներսից պայթեցնելը» ծայրայեղների կարծիքով կը լինէր յեղափոխական ակտ, որը կը ցնցէր ժողովրդին, կը բանար նրա աչքերը։ Այո, ճիշտ է, դա ևս յեղափոխական գործ կը լինէր, բայց մի շատ անօգուտ և աննպատակ գործ, որից կառավարութիւնը, յամենայն դէպս, ոչինչ չէր կորցնի, այն ինչ ժողովուրդն այդպիսով նորից իր առաջ փակած կը լինէր այն ձեղքը, որ կառավարութիւնը Պեռական Դումայի անունով պատրաստել է իր անմտաբիլ ամրոցի մի կողմից և որին տիրանալու համար հարկաւոր է միայն բոլոր թափով ներս մտնել և այնտեղ ամուր նստել...

Ցեղափոխական օգտակար գործ կը լինէր ոչ թէ Դուման փակել տալը, այլ անկեղծ գործ կատարելը, եթէ նոյն իսկ դա սահմանափակվէր թէկուզ միմիայն ազատ խօսելով։ «Զափաւոր» կադետների—Ալադինների, Բոգիչեվների, Մուրոմցևների և այլն ճառերն ամենի մեծ չափով էին ցնցում Ռուսաստանի ժողովրդներին, քան թէ «ծայրայեղների» ամենօրեայ անթիւ կոչերն ուռուցիկները...։

Եւ ինչպէս արդէն փաստերը ցոյց են տալիս, կառավարութիւնն այժմ ամենից աւելի հաւաձում է կադետներին, աւելի վախենալով նրանցից իբրև խելօք ու հեռատես հակառակորդներից, քան թէ մեծամտիւն «յեղափոխական» կոչում կրող կազմակերպութիւններին, որոնք իրանց տաքարիւն գործունէութեամբ ու ծայրայեղութիւններով, մանաւանդ մեծ մասամբ մասնաւոր դասակարգային շահերի ձգտումով, թէ չեն կարող վայելել ընդհանուր ժողովուրդի համակրանքն ու աջակցութիւնը և թէ միշտ ասիթ կը տան կառավարութեանը ուզած ժամանակ անմիջապէս ցրվել Դուման։

Որ այս Դուման ևս շատ հեռու է կատարելատիպ լինելուց՝ դա շատ պարզ է։ բայց դա չէ նշանակում թէ ուրիշն պէտք է դրան արհամարհել և աշխատանք կործանել։ Իսկ եթէ մենք դրա անդամութեան համար քուէ կը տանք այնպիսի մարդկանց, որոնք այդ ծայրայեղ դաւանանքն ու աշխարհայեացքն ունեն, այն ժամանակ մենք, այժմից կարելի է ասել, ապարդիւն ու անօգուտ դարձած կը լինինք Պեռական Ռուսաց և նրան վաղաժամ փակման դատապարտած։

Պեռական Դումա հաստատելով կառավարութեան միակ նպատակը չէր կարող լինել դրանով խաղացնել ժողովրդին՝ ճնշելու համար նրա պայթած բողոքը կամ մթագնելու նրա զարթող գիտակցութիւնը։ Դա պարզապէս մի զիջում է, որ կառավարութիւնն իրան ստիպված է զգում անել իր ժողովրդին։ Միանգամից տալ ժողովրդի ձեռքը ամեն ինչ, ինչպէս որ ծայրայեղների ցանկութիւնն է, նա ի հարկէ այդ չի ուզի և չէ կարող։ Դուման այն միակ ճանապարհն է, որի միջոցով ժողովուրդն ատիճանաբար կարող է պահանջել միշտ աւելի ու աւելի իրաւունքներ և նա ստիպված կը լինի տալ հետզհետէ այդ ամենը։

Ասել թէ Դումայում օրգանական աշխատանք չէ կարելի կատարել, դա սխալ է. հրատարակվող օրէնքները պէտք է նրա քննադատութեան բովից անցնեն և դրանք մեծ յեղաշրջում առաջ կը բերեն ներկայ բոլոր կարգերի ու դրութիւնների վրա։ Մանաւանդ պէտք է նկատի ունենալ, որ ամենաբարձրագոյն ազգաբնակչութեան մասամբ ընդունված ծայրագաւառները և հալածանքի ենթարկվող հպատակ այլազգի բիւրաւորներ ունեցող Ռուսաց Դումայի ներսում ինչ բան կարող են սպասել Պեռական Դումայից։

Դրան իբրև օրինակ կարող է ծառայել այն հանգամանքը, որ նախկին Դումայում մի քանի անդամները կարողացան այնպէս աղմուկ բարձրացնել Բելոստոկի ջարդի կամ Վարանդայի աւերումների առիթով։

Վերջացնելով մեր խօսքը, առանձնապէս հայ ժողովրդի մասին կասենք, որ նա՝ իբրև խաղաղ կուլտուրական ճանապարհով առաջադիմութեան ձգտող ազգ, պէտք է Պեռական Դումա ուղարկի իր ամենափորձված, եռանդուն և ձեռնհաս անդամներին պաշտպանելու նրա շահերը այնտեղ օրինական հողի վրա։ Իսկ եթէ կընարվեն աւելի ծայրայեղ անձնաւորութիւններ, բարոյական պարտք դնել նրանց վրա, գնալ Դումա ոչ թէ անօգուտ թող ու գուման բարձրացնելու և Բամիշլիների վաստակած դանդիներին ձգտելու, այլ բլօկ կազմելու միայն չափաւոր ձախակողմեանների հետ, որպիսիք, իբրև ամենայարմարն, այժմ ներկայանում են կադետները։

Լ. Մարկոսեան

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

—Ներքին գործերի մինիստրութիւնը նոր տեղեկութիւններ է ստացել Սմօլենսկի նահանգից, որ Դուխովչինի և նրա հարևան գաւառների գիւղացիները սկսել են ինքնագլուխ կերպով կարատել կալուածատիրական անասունները։ Ուշոր կոտորումներ կատարվել են բարձնեա Մցկլեր-Զակօժելսկու կալուածքում, որտեղ կոտորել են 210 գեսեատին անտառ։ Նահանգապետի հրամանով Դուխովչինի գաւառն են ուղարկվել ոստիկանական-մարմինները և տարածնիկներ, որովհետև ամենից աւելի մեծ չափեր է ստացել շարժումը այնտեղ։

(«Страна»)

—Ի նկատի առնելով այն, որ Արքաքսինի գաւառի ոստիկանութիւնը պատսխի կերպով է վերաբերվել մինիստրութեան շրջաբերականին և խիստ միջոցների չէ դիմել ոստիկանութեանը դիմադրելու տուրքերը կանոնաւոր կերպով վճարելու համար, այդ պատճառով ներքին գործերի մինիստրութիւնը առաջարկել է Տուլայի նահանգապետին պաշտօնից արձակել ոստիկանութեան բոլոր ծառայողներին և նրանց փոխարէն նշանակել այնպիսիներին, որոնք աւելի գործունեայ և հրաշագործ կը լինեն։ («Страна»)

—Նոյեմբերի 5-ին Պետերբուրգի Կազանսկի տաճարում հանդիսաւոր պատարագը վերջանալուց յետոյ, գործակատարների դաշնակցութեան մի խումբ ներկայացուցիչներ՝ դիմելով Անտոնին եպիսկոպոսին՝ խնդրել են մաղթանք կատարել կիրակնօրեայ հանգստութեան համար մղված պայքարն աջողութեամբ պսակվելու համար։ Եպիսկոպոսը համաձայնվել է, բայց ոստիկանութիւնը իսկոյն տեղեկացրել է այդ մասին քաղաքապետին և ամանաչնել, որ մաղթանքը կարող է ցոյցի կերպարանք ընդունել. տաճարի հրապարակի վրա գործակատարների ահագին բազմութիւն էր համախմբված։ Այդ պատճառով քաղաքապետը կարգադրում է մաղթանք չը կատարել և տաճարի առաջ կենդանացնում է ոստիկանական մի ուժեղ խումբ։ Կազանսկայա փողոցում № 3 տան մէջ նոյնպէս կենտրոնացված է եղել ժանդարմների մի վաշտ։ Մօտաւորապէս ժամի 2-ին տաճարի առաջ, հրապարակի վրա հաւաքված է եղել մօտ 1000 հոգի, գլխաւորապէս գործակատարներ, որոնք նպատակ են ունեցել ներկայ գտնվել մաղթանքին, սակայն նրանցից ոչ ոքի ներս չեն թողել մտնելու տաճար։ («Свобода и Жизнь»)

—Վլադիմիրի նահանգում, Սայրալ կայարանին մօտիկ Բէյսել աւանում պատնվել են մի ծերուկ մարդ և պառաւ կին։ Ցանցաւորները վերցնելով մի քանի ոստիկաններ թղթեր հեռացել են։ Բայց և այնպէս նրանց դէմ հարձակեր էր կազմակերպվել և մարդապանների մէկը կալանաւորվել է, իսկ միւսները, որոնց թւում և պարզուլեը, փախչում են Սայրալ և մըտնելով տներից մէկը սկսում են կռիւ տալ 50 հոգուց բաղկացած ոստիկանների դէմ։ Պաշտպանվողները վիրաւորում են ոստիկանական պրիստաւին, պօրուչիկ Միլմանին և մի ոստիկանի։ Որովհետև ոստիկանութիւնը չէր կարողանում վերցնել գիրքը, այդ պատճառով դէպքի մասին հաղորդում են Վլադիմիրի նահանգապետին։ Վերջապէս նահանգապետի կարգադրութեան համաձայն նոյեմբերի 5-ին մի ուժեղ զրոհով 50 ոստիկաններին աջողվում է վերցնել այդ «Фортъ Шаброль»-ը։ Բայց մեծ երկիւղով էին մօտենում այդ անառիկ գիրքին։ Ներսում ոչ ոքի չեն գտել, նրանք արդէն գիշերը, օգտվելով մթութիւնից, փախել էին։ Ոստիկանները այդ դատարկ տան մէջ գտել են միայն 3 հրացան, որը ապացուցանում է, որ պաշտպանվողները եղել են 3—4 հոգի։ Նրանք փախել են անհետ։ Վլադիմիրից արդէն խուզարկու ոստիկաններ են պահանջվել հոտառութեամբ գտնելու համար փախստականներին։

—Նոյեմբերի 7-ին Պետերբուրգ է հասել մարդասար գնացքը բոլորովին տարօրինակ դրութեան մէջ։ «Свобода и Жизнь» լրագրի տեղեկութիւնով, երկու վագոնների գնացող մի խումբ նորակոչիկներ, հարիւր հոգուց բաղկացած, ջարդ ու փշուր են անում վագոնների լուսամուտները, լապտերները և կահկարասիները։ Անկարգութիւնների առաջն առնել ոչ մի կերպ հնարաւոր չէ եղել, այնպէս որ երկաթուղու վագոնները ամբողջապէս նրանց տրամադրութեան տակ էր գտնվում։ Բարեբաղդաբար նորակոչիկները եղել են Պետերբուրգից ոչ հեռու կայարաններից մէկում և չեն կարողացել ազատել սարսափահար ճանապարհորդներին, որոնք ամեն մի ըօպէ սպասում էին, որ նորակոչիկները կըմտնեն իրանց մօտ ևս։

ՄՏԵՐԻՄ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐ

Նաստ գաւեշական «սարսիմօրատներ» է կատարում մեր «լիբերալ» կուսակցութիւնը։ Նա այնպիսի ցատկումներ է անում դէպի «իսկական ռուս ժողովրդից» կուսակցութիւնը ու սրանց շուրջը, որ նոյնիսկ այդ կուսակցութեան ամենարդամիտ անդամներն էլ շատ անգամ շուարում ու չեն կարողանում հասկանալ ու գուշակել նրա յետագայ թռիչքները։ Ինչպէս յայտնի է, «իսկական ռուս ժողովրդ» կանց միութիւնը», առաջին Պետական Դումայի դասային տարբերութիւնների վերացումը կամ գիւղացիներին էլ քաղաքացիական իրաւունքներ տալը՝ մի կտոր թղթի վրա՝ ոչ մի իրական նշանակութիւն չէր կարող ունենալ, քանի որ սենատ «բացատրութիւններով» կառավարութիւնը հենց այդ նոյն գիւղացիների անդամ մեծամասնութեանը զրկել էր ներկայի համար ամենակարևոր և ամենամեծ պետական նշանակութիւն ունեցող ընտրողական իրաւունքից։ Ինչու՞ ուրեմն դասային տարբերութիւնների վերացումը կամ գիւղացիներին էլ քաղաքացիական իրաւունքներ տալը՝ մի կտոր թղթի վրա՝ ոչ մի իրական նշանակութիւն չէր կարող ունենալ, քանի որ սենատ «բացատրութիւններով» կառավարութիւնը հենց այդ նոյն գիւղացիների անդամ մեծամասնութեանը զրկել էր ներկայի համար ամենակարևոր և ամենամեծ պետական նշանակութիւն ունեցող ընտրողական իրաւունքից։ Ինչու՞ ուրեմն դասային տարբերութիւնների վերացումը կամ գիւղացիներին էլ քաղաքացիական իրաւունքներ տալը՝ մի կտոր թղթի վրա՝ ոչ մի իրական նշանակութիւն չէր կարող ունենալ, քանի որ սենատ «բաց

տարբերությունները վերացնելու մանավանդ թող չը փչել այն գիւղացիների աչքերին, որոնք ընտրությունները պիտի մասնակցեն. չէ՞ որ այդ ճարպիկ մանավանդը միանգամից կը կաշառի այդ կարգի գիւղացիներին, որոնք, այլ ևս չը կասկածելով կառավարության բարեացակամության վրա, իրանց կողմից էլ բարեացակամ ներկայացուցիչներ կուզարկեն Դումա, և այդպիսով կառավարությունն էլ «սահմանադրական» ճանապարհով կատարելապես իր նպատակին հասած կը լինի:

Այդ էր, ի հարկէ, հանձարեղ Ստոլիպինի քաղաքական մանավանդի ամբողջ ներքին իմաստը: Բայց ոգէա «ռուս մարդիկ» այդ բանը չը հասացան և իրանց անհասկացողությամբ սոփեցին կառավարությանը աւելի անկեղծ լինել ու իր գոյնը գուբս տալ: Եւ նա գուբս տուեց իր գոյնը, մի երկրորդ շրջաբերականով յայտարարելով ազգականներին ու զեմստվոներին, թէ՝ դասային տարբերությունների վերացումը բոլորովին չը պէտք է հասկանալ այն մտքով, որ իբր ազնվականները ու զեմստվոները զրկվում են գիւղացիներին առաջին նման զանազան պարտքերի ենթարկելու ու նրանց հետ իրանց ուզածի պէս վարվելու իրաւունքներից...

Գաղափարը բացված էր: Եւ «իսկական ռուս մարդիկ», դարձեալ բոլորովին չը հասկանալով, որ, այդպիսով կառավարությանն «սահմանադրական» ծրագրի մի շատ նշանաւոր մասը ջուրն էր ընկնում, որ այդ նոր շրջաբերականից յետոյ «բարեմիտ» գիւղացիներն էլ բոլորովին կը կորցնեն իրանց «բարեմտությունը»,—անսահման ուրախությունից կուրացած՝ խորագէտ մինիստրի վրայ թաթափեցին ու... մերձեցումը կատարեալ եղաւ:

Այժմ, ինչպէս բոլոր նշաններից երևում է, այլ ևս ոչ մի տարաձայնություն չը կայ կառավարության և «իսկական ռուս մարդկանց» կուսակցության միջև. նրանց մէջ կատարեալ համաձայնություն է կայացել: Այլ ևս ոչ այս վերջինն է պահանջում, որ Պետական Դումա չը հրաւիրվի և ոչ էլ կառավարությունն է պնդում, թէ ինքը «անկուսակցական» պիտի լինի: Ընդհակառակը նրանք այժմ բոլորովին միացած, միահամուռ այժերով պատրաստվում են ընտրություններին դիմաւորելու: Դրանք երկուսն էլ հիմա կանգնած են մի ոտքով Ստոլիպինի «սահմանադրական», իսկ միս ոտքով «իսկական ռուս մարդկանց» պահանջած ոչ-սահմանադրական ճանապարհների վրա, այլ ևս համոզված լինելով, որ այդ երկու ճանապարհներով էլ շատ լաւ կարելի է նոյն նպատակին հասնել, այն է՝ վերջապահել հին, բռնապետական ընթացքին:

Վերջերս մի «ինչին» միջադէպ, քիչ էր մնում, որ պաղությունն պիտի գցէր այդ երկու միմեանց հարազատ դաշնակիցների միջև, բայց այդտեղ էլ կառավարությունը իր կատարեալ բարեացակամությունն ու անկեղծությունն մի պերճախօս հաստատք տուեց, որից յետոյ ոչ միայն միջադէպը վերացվեց, այլ և դաշնակիցները աւելի սերտ կապերով կապվեցին միմեանց: Արժէ այդ նշանաւոր միջադէպը արձանագրել այստեղ:

Օրլով քաղաքում «իսկական ռուս մարդիկ» մի նոր միություն էին հիմնել, «Օրլովանության և կարգապահության միություն» անունով, որը, բոլորովին անկեղծ լինելու համար, իր կանոնագրության մէջ բացարձակ կերպով գրել էր, թէ՝ «Միության նպատակն է վերականգնել միապետի ինքնակալությունը», և ինդրել էին տեղական զինուորական-նահանգապետից, որ նա լեգալիզացիա անի այդ նոր միությանը: Սակայն նա, հիմնվելով Ստոլիպինի այն հարիւրաւոր յայտարարությունների վրա, թէ՝ «Ռուսաստանը այժմ սահմանադրական երկիր է», և ենթադրելով, որ սահմանադրական երկրում միապետի ինքնակալության մասին մտածելը նոյնչափ յանցաւոր գործ է, որչափ և յեղափոխության մասին մտածելը, չէր համաձայնել այդ ինդիրը կատարել և միությունը լեգալիզացիա անել: Պարզ բան է, որ «ռուս մարդիկ» սաստիկ վրդովվեցին այդ բանից և գիմեցին իրանց սիրելի դաշնակցին: Սա, ի հարկէ, նոյնպէս սաստիկ վրդովվեց «անհնազանդ» գիներալ-նահանգապետի վարմունքի դէմ և... հեռագրով հրամայեց լեգալիզացիա անել «Օրլովանության և կարգապահության միությունը»...

Ե.-Ա.

ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՏԱՐԱԾՈՂ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԱՑՈՒՄԸ

Նոյեմբերի 10-ին քաղաքային դումայի նոր դահլիճում բացվել է Բաքուի նահանգի մահմեդական ազգաբնակության մէջ գրագիտություն տարածող Բաքուի ընկերությունը:

Ցերեկվայ ժամը 12-ի մօտերը դումայի դահլիճը լի էր մահմեդականներով, որոնց թւում նաև հոգևոր անձինք՝ նահանգական զալի Միր-Մահմէդ-Քէրիմ-Միր-Ջաֆար Զաքիի գլխաւորությամբ, ինտելլիգենցիան, դումայի ձայնաւորները, Բաքուի վաճառականության ներկայացուցիչները և այլն:

Ժողովի նախագահ է ընտրվում նահանգական զալին, իսկ քարտուղար Ա. Ադայեվը: Երբ վերջինս մի ճառով բացատրում է բացվելիք ընկերության նշանակությունը մահմեդականների համար, զալի Միր-Մահմէդ Քերիմը, Ախ. Հաջի-Միրզա Արուտուրքը, Հ. Զ. Ա. Թաղիեվը, Ա. Ա. Հասանովը և այլք խօսում են մահմեդականների յետամնացության մասին, որոնց մէկ փրկությունը հասարակության ձեռքով կառավարվող դպրոցումն է միայն: Եթէ մահմեդականները կամենում են չը կորչել, այլ մասնակցություն ունենալ քաղաքացիական և քաղաքական առաջադիմության հիմունքների վրա կառուցված նոր կեանքի ասպարէզին, ուրեմն և հարկաւոր է այսուհետև, արթնանալով թմրությունից, աւելի շատ լուսաւորական և բարեգործական հիմնարկություններ հաստատել: «Բաւական չէ ցանկանալ միայն, հարկաւոր է գործով իրականացնել այդ ցանկությունը, որ միևնոյն ժամանակ մահմեդականների առաջադիմությունն կարելի է հանդիսանում»,—վերջացնում է իր ճառը Հաջի-Զէյնալ-Աբդին Թաղիեվը, յայտարարելով, որ ողջունելով մահմեդականների մէջ գրագիտություն տարածող ընկերության բացումը, ինքը իր կողմից նուիրում է 3000 ռուբլի:

Այդօրինակ յայտնումը պ. Թաղիեվի, որը մահմեդականների նոր լուսաւոր գործում մի բարի սկզբնաւորության առաջնորդ հանդիսացաւ, ընդունվում է ժողովված բոլոր մահմեդականների կողմից անսովոր խանդավառությամբ, վարձատրելով—դէպի բարի գործերը միշտ արձագանք տուող Հ. Զ. Ա. Թաղիեվին բուռն, երկար, չընդհատվող ծափահարություններով, որոնք երիցս կրկնվում են նոյն օգնորությամբ:

Ապա սկսվում է անդամների ստորագրությունը: Ժողովված մահմեդականների մէջ նրա կամքից յոյժ արի ոգի և պատրաստականություն իսկապէս յեռանում մահմեդականների լուսաւորությանը ծառայելու: Այդպիսի ոգևորված տրամադրությունը ազդում է նուէրների և անդամավճարների վրա. մէկ և կէս ժամվայ ընթացքում ստորագրությունը հասնում է 17,604 ռուբլի գումարի, որով բացի միանուագ նուիրած վճարներից, մահմեդական նոր ընկերությունը ապահովված է 6—7 հազար ամենամեայ վճարներով:

Նուէրների և անդամների ստորագրությունը դեռ շարունակվում է. հաւաքված փոդերը յանձնված է պահելու համար Հ. Զ. Ա. Թաղիեվին: Նուիրատուների ազգանունները հրատարակվելու են իր ժամանակին: Մոգոր նուիրաբերողներից առայժմ կը յիշենք.—Հ. Զ. Ա. Թաղիեվ—3000 ռ., Ագա-Մուսա Նաղիեվ—3000 ռ., Շամսի Ասադուլլաեվ—3000 ռ., Ագա-Հիւսէյն և Նաչաֆ-Կուլի Թաղիեվներ—500 ռ., Հաջի-Շըրա-Ալի Դաղաիեվ—500 ռ. և այլն:

Գրագիտություն տարածող հէնց նոր բացված ընկերությունը նպատակ ունի նպաստել գրագիտության տարածմանը և սկզբնական կրթությանը մայրենի ազգէջյանի և ռուսաց լեզուներով Բաքուի նահանգի մահմեդական ազգաբնակության մէջ: Այդ նպատակին հասնելու համար ընկերությունը՝

ա) պաշտպանություն և աջակցություն է ցոյց տալիս գոյություն ունեցող դպրոցներին, մեկտեղներին (ստորին կարգի դպրոցներ) և մեդրեսէներին (հոգևոր դպրոցներ).

բ) նպաստում է նոր դպրոցներ, մեկտեղներ և մեդրեսէներ բանալուն, կամ թէ ինքն է բանում այդպիսիները իր միջոցներով.

գ) հրատարակում է դասագրքեր, ձեռնարկներ և այլ գրքեր ժողովրդական ընթերցանության համար, ինչպէս, ըստ չափու միջոցների ներման և հարկաւոր դէպքում հրատարակում է ռուսերէն կամ թաթարական լեզուներով իր տեղեկությունները կամ մի այլ պարբերական օրգան՝ որոշած կարգի համապատասխան ծրագրով.

դ) բանում է ընկերության կից գրադարան-ընթերցարան, ինչպէս իր անդամների, այնպէս և առհասարակ ժողովրդական ընթերցանության համար, ինչպէս և գրքերի պահման՝ ձրիաբար բաժանելու կամ ազատ վաճառելու և առհասարակ մանկավարժական պիտոյքների պահեստ.

ե) ձեռք է առնում իրանից կախված բոլոր միջոցները գտնելու հմուտ ուսուցիչներ և վարժուհիներ գպրոցների, մեկտեղների և մեդրեսէների մէջ,

զ) կազմակերպում է մանկավարժական դասընթացքներ և ժողովրդական ուսուցիչներ և վարժուհիներ համագումարներ.

է) ժողովրդական դպրոցների ամենաընդունակ սաներից պատրաստում է ժողովրդական ուսուցիչներ և վարժուհիներ կամ գոյություն ունեցող կրթական հաստատությունների մէջ, կամ եթէ ընկերության միջոցները կը նեղին, հիմնում է այդ նպատակով նոր առանձին կրթական հաստատություն իր հաշվով.

ը) կազմում է՝ ամեն անգամ հարկաւոր թոյլատրությամբ՝ ներկայացումներ, ժողովրդական ընթերցանություններ մոգական պատկերներով, գեղական զրոյցներ, գրականական երեկոներ և այլն.

թ) աջակցում է ազգաբ մահմեդական աշակերտներին մտնելու կամ ուսումը միջին և բարձր կրթական հաստատություններում.

ժ) իր հովանաւորության տակն է առնում Բաքուի նահանգի մահմեդական ազգաբ նոր-նորելի գպրոց յաճախող որբերին և բոլոր օրդաց և հոգում է նրանց սկզբնական ուսման մասին: Այս 7 գլուխներում յիշատակած դէպքերում ընկերությունը զեկավարվում է գոյություն ունեցող կանոններով:

Այսօրինակ ծրագիրով դեռ անցեալ տարի կազմվել է մի կանոնագրություն, որը ներկայացվել է Ա.-Մ.-բէկ Թովչիբաշիվի ձեռքով Կովկասի Փոխարքային, բայց այդ կանոնագրությունը, որ հետամուտ է Կովկասի ազգաբնակության մէջ գրագիտություն տարածելու նպատակին, չը հաստատվեց դաշնակցությունների և ընկերությունների վերաբերեալ հրատարակած ժամանակաւոր կանոնների պատճառով, որոնց հիման վրա նոր բացված ընկերության կանոնագրությունը հաստատվում է Բաքուի ազգաբնակության յայտարարական կարգով:

Նոյեմբերի 20-ին կայանալու է մահմեդականների երկրորդ ժողովը՝ վարչության կազմը ընտրելու համար:

Սրանց ողջունում ենք լուսաւորության օգտին մահմեդականների այդպիսի լաւ և գնահատելի սկզբնաւորությունը և ցնծում ենք այն աջողության համար, որ երևան եկաւ նոյեմբերի 10 ին և որը հանդիսանում է—մենք այդ բանում հաւատացած ենք—լաւագոյն գլուխանը մահմեդականների համար այնքան ցանկալի լուսաւորական ընկերության ամրացման և բարգաւաճման:

(«Ռ.»)

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտում լուրջ կոնֆլիկտ է ծագել ուսանողության և զպրոցի վարչության ու ուսանողության միջև:

Նոյեմբերի 7-ին ինստիտուտում կարդացվել է գիտական ընթերցում, որի ժամանակ պրեսաւորը գնացել է դիրեկտորը մօտ և յայտնել նրան, որ ինստիտուտում ապօրէն ժողով են գումարել և որին ներկայ են մօտ 2,000 հոգի, որոնց մէջ կան բաւականաչափ կողմնակի անձինք: Դիրեկտորը դրան պատասխանել է, որ իրաւ է, ընթերցում կարդում են, բայց նրան ներկայ են ընդամենը 800 հոգի, և այն էլ բացառապէս զպրոցի ուսանողներ: Պրեսաւորը պահանջել է ժողովը փակել, ապատանելով կատարած բանութիւններին ու ոտրձգութիւններին, այսօր մենք ականատես չենք լինի այդ անպատաւարեր դէպքին: Գոնէ այժմ թող հայութիւնը իր ձայնը ուժգին բարձրացնի, «խուլիգաններին» և ժամանակակից «Արշակաւանի խմբերին» շանտաակութիւններին վերջ դնի:

Դաւլդուբների խմբակից մենք ամեն բան սպասում էինք, բայց որ «ժարդ» թարգածի մէջ «մարդկային» այդ ատեճան անարվի, այն էլ մի բարձրաստիճան և ծերունու, մենք այդ չէինք սպասում:

Եթէ այս անգամ էլ հայ հասարակության բանիմաց մասը անտարբեր վերաբերվի, այն ժամանակ գուցէ հանդիսատես լինենք պատմության մէջ փեղած քսանմիլի ոճիրների:

(47 ստորագրություն)

ԳՐԱԿԱՆ ՇԱՆՏԱԺ

Տասնեակ տարիներով հայ ժողովուրդը ազգային ինքնակամի հաշիւով և ինքնագովական փչոցներով դատարկող մի կազմակերպության ճիւղերից մէկը Հիւսիսային-Ամերիկայի Լվն քաղաքից գրած մի հայհոյական նամակով յայտնում է, որ «Մուրճի» հրեք վերջի թիւը վերադարձնում է, իմացնելով միաժամանակ, որ դադարեցնենք ամսագրի առաքումը իրան: Նոյեմբ. 8-ին գրած այդ նամակի տակ, այդ բոշխոփանները ստորագրել են «Հ. Յեղ. Դաշն. Լիճի կոմիտեի Անուամբ»:

Կարդացի և չը զարմացայ «Հայ Յեղափոխական Դաշնակցության Լիճի կոմիտէ» խուժանապետների այդ «կուլտուրական» քայլի վրա. խուժանապետական նոքին և սխամեմը աշխարհագրական տարբերություններ չէ նանաչում:

Բայց ամերիկահայ այդ բոշխոփանները չեն բաւականացել այդքանով. երևի վախեցել են, որ ես քաջութիւն չեմ ունենայ հրապարակ հանել «Մուրճում» իրանց այդ գովելի սխրագործությունը, ուստի շտապել են «պարբիսաների» օրգան «Երկրի» զեկավարներին... աւելորդ տալ Եւ մեր կոկիսական խուժանապետները «Երկրի» № 40-ում տպել են իրանց ընկերների այդ նամակը, բարոյ գտնելով մի փոքրիկ փոփոխություն մտցնել... ստորագրության մէջ: Մեղ գրած նամակի տակ դնելով «Հ. Յ. Դաշն. Լիճի կոմիտեի Անուամբ» ստորագրությունը, չէին կարող՝ «Երկրին» ուղղած «նոյնմասամ նամակի» տակ նոյն մարդիկ դնել «Լիճի Հայկական Անուամբ» ստորագրությունը: Տարբերությունը շատ մեծ է և նաև առանց կօմենտարիների հասկանալի: Բնական է ենթադրել, որ այդ փոփոխությունը կատարված է այստեղ:

Այդ մետամօրֆոզով երկրականները ցանկացել են մոլորեցնել հասարակական կարծիքը, ինչպէս անում են թուրք և ռուս բիւրոկրատները՝ կեղծած ստորագրություններով ապելով իրանց պաշտօնական օրգաններում օպոզիցիայի դէմ բիւրոկրատական ճիւղերից և սև-հարիւրեակային խմբերից ստացած գրությունները, իբրև «ժողովրդի արդար զայրույթ» արտայայտություն: Այդ գրական շանտաժի նպատակը պարզ է, ուստի երկրաբանությունները աւելորդ են: «Նպատակը արդարացնում է միջոցները» դրված է հայ «յեղափոխական» Լօյոլաների դրօշակի վրա: Միլիոնաւոր կեղծիքներին մի հատ էլ աւելացնելով ինչ են կորցնում դրանք. «Հայ Յեղափոխական Դաշնակցության Լիճի կոմիտէի Անուամբ» խօսքերը զարձնենք «Լիճի Հայկական Անուամբ»—ad magnam gloriam Daschnakzthiouni!

Լ. Սարգսեանց

ԱՅՍՈՒՀԵՏԵՎ ԻՆՉ ՊԷՏՔ Է ՀՆԱՐԼԻՔ

Շատ է ասվել, այժմ էլ կրկնում ենք:

Մեր անտանելի սովորություններից մէկն այն է, երբ զործիչը, բարի, հասարակության պիտանի անդամը կենդանի է, երբ նա իր կեանքի դեռով ցանկանում է մեր մեռելները մաքրել. ամենեին չենք հետաքրքրվում նրանով, ուշք չենք դարձնում նրա կենդանի քարոզած մտքերին, նրա տանջանքներն արհամարհելուց զատ և՝ խոչընդոտ ենք հանդիսանում գործունէությանն...

Մեռաւ, յաւիտենականության գիրկն ընկաւ հազուագիւտ անհատը և նա մեր միջից զանազան դասակարգի մարդիկ սուլելի պէս բուսնելով սկսում են գովել, գնահատել, գովաբանել: Դրողը գրիչն է առնում ձեռքը, բանաստեղծի մուզան է գալիս, ճառախօսն էլ փրփրում է ամբիոնի վրա և երևան են գալիս մէկը միւսին յաջորդող բառեր, բարձրանքների գագաթնակետին հասցնող գովասանական բառեր՝ այդ անզգայ դիակի հասցէին...

Հակառակորդներն նոյն իսկ այդ ժամանին չեն կարողանում իրանց անզգայությունն առաջ տանել և սառնասիրտ պատանդվել. մեռ, ուզնահատելի կորստի մասին ողբում են և վերջիններս...

Այսպէս վարվեցին Աբովեանի, Նազարեանի, Բաֆֆիի, Պատկանեանի և շատերի հետ:

Այսպէս վարվեցին և մեր՝ սիրելի անմահ Գրիգոր Արծրունու հետ:

Ինչեր նա չը կրեց, ինչեր նա չը քաշեց. Նրա հոգին օրական մի քանի անգամ խոցոտվում էր, նրա սիրտը կտոր-կտոր լինում: Նրա կեանքն ամբողջապէս թոյն էր, նրա կերած-խմածը լեղի:

—Նա օտարասէր է,—գոռում էր այն ժամանակվայ խուժանապետներից մէկը:

—Նա ազգի տուէը քանդող է,—մասնակցում էր երկրորդը:

—Նա աղգուրաց՝ դաւաճան է,—յարում էր երրորդը:

—Գերմանացու կրունկները լպստող է...

—Օտարների փոշիներով ոգևորվող...

—Նա մասնիչ է...

Եւ այսպէս անթիւ փսփսոց, բանրասանք, անթիւ զրպարտություններ:

Այժմեան «Մշակի» հակառակորդների անվայել ինստինկտների խաղերը տեսնելով, ես չեմ կարող անտեսելով չը յիշել Արծրունու կենդանի ժամանակը, նրա հակառակորդներին. մէկ ցիլինդրայով ապուշ դերձակ, մէկ տղրուկ վաճառական և մէկ էլ մի հասարփոր մակեր Բաքու, Պարապետի մօտ, իշու փարանի մէջ խրել էին «Մշակի» համարը և նրանք իշուկի հետ հանալով ծափ էին զարնում, ինքնաբաւականությամբ զուարճանում այդ երեխայական անմիտ գործողության համար՝ բաւական չէ, մի քանի օրից յետոյ այդ անմիտ դէպքը մամուլի մէջ էր գրվում, հասարակության մէջ ցրվում:

Այն ժամանակ ի՞նչ անուններով էին մկըռտում «Մշակին». «Բազարնայա փողոցի թերթ», «ամբարիշտ թերթ», «հայհոյանքի տոպրակ», «ինասակար օրգան» և այլն, և այլն, և այլն:

Ի՞նչ էին ուզում նրանք «Մշակից». ի՞նչ էին պահանջում նրա խմբագրից և այդ ամենն ինչու համար էր:

Շատ պարզ է:

«Մշակը» հանգիստ քուն չէր տալիս սիրուտիկաւոր խալիֆաներին, հասարափորներին, «ձիւնից մաքուր, անարատ» տերէրներին և նմանոներին:

«Մշակի» պահանջածը բարձրապատիւ ազատների համար շատ էլ դիւրամարսելի չէր...

Ահա թէ ինչու համար էին այնքան զանազան անունները:

—Գարոնները, մարդ եղէք, կատարեալ մարդ, ազատամիտ, բարոյակիրթ մարդ. բաւական է որքան ժողովրդին տգի, խաւարի և ազատության մէջ սեղմեցիք,—իրարատաբար լսվում էր Արծրունու ձայնը:

—Մարդ դաւէք,—կրկնում էր նա անդադար:

Բայց ի զուր. բոլորն ի զուր, ապարդիւն:

—Բանի որ դուք մարդ դաւնալ չէք կարող, այսօրվանից ձեզ վրա ես խաչ կը քաշեմ,—ասաց մի օր Արծրունին հարատատակ:

Հակառակորդները ծաղրեցին, քրքջացին, անարգեցին, խաչադողությունների և ֆիլուսնիկությունների դիմեցին, բայց և՝ ընկան, և...

Եւ այսօր նորից են յարութիւն առել մոպատները, խալիֆաները, Սիմոն-խալիֆաները:

Այսօր սրանք ձեռ-ձեռքի տուած բարեհաճում են իրանց նախնիների շաւղով գնալ:

Սրանք երդվել են ոչնչով չը տարբերվել իրանց հայրերից և անխտիր որոգայթներ են լարում «Մշակի» դէմ:

Թշուառականներ:

Ողնուկ թշուառականներ:

Երբ դատության բաժակը լցվեց, «Մշակը» ձեզ ասաց. «Բաւական է, խելքի եկէք»:

Դուք հայհոյեցիք:

Երբ ձեր անպատկառ հայհոյանքը ձեր երեսին շպրտվեց, դուք լացիկ երեխայի պէս սկսեցիք զոռալ, թէ «մեզ հայհոյեցին, անարգեցին, մեզ՝ ազգի ցաւը մենակ տանողներիս...»

Եւ՝ հայհոյել, և՝ զոռալ. այդ լաւ բան է, Մաշալա:

Դուք սատիպեցիք «Մշակին» ձեր երեսի հաստ դիմակը պատռել (ուրիշ կերպ էլ նա իրաւունք չունէր անելու, այդ հասարակության պահանջն էր), այնուհետև որատալով զրպարտություններն պոչից բռնեցիք.

—Մատնություն, մատնություն, դանսոս չեիկեր...

Այդ էլ չաջողվեց, չէ՞:

Այսուհետև ձեր թեթև գօրաներն ինչէր պիտի մտցնեն: Ախաբ մի բանով պէտք է պատժական Սիմոններից գերազանցէք:

Հատել է պաշարները:

Ներեցեր:

Այդ, դուք համոզվեցիք, որ ձեր անխիղճ զրպարտությունները գրշի արժէք չունեն. ձեր անմիտ գրգռողները օգուտ արձագանք գտան: Դուք տեսաք, որ ձեր հայհոյանքների պատասխանը միայն զղջանք է և արհամարհանք, սկսեցիք ձեզ յոյս տալ՝ ասելով. «վախենում են մեզանից. Բաքանթարը զգոյշ է վերաբերվում, Առաքելեանը մեղմացել է»: Չէ, գրանցով էլ բան չի լինի, որպէս բանի տեղ չանցաւ ձեր գիշեր-ցերեկ մուրացկանի պէս գոնէ դուռն ընկած, սրանցիրան խարելով ստորագրություններ ժողովելը:

Ստորագրություններ, որոնք բոլորն էլ մի գրչի, խղճուկ գրչի մրոտումներից են ելած, շատ քիչ փոփոխություններով:

Բայց որպիսի հրճուանքով գետեղեցիք ձեր օրգանի մէջ դեռ չարն ու բարին չը հասկացող մի «ուսանողի» հայհոյանքները, որով առանց հասկանալու «Մշակին», աշխատում էր «կղզեր» և սոյնանան խօսքեր կպցնել: Այդ դէպքում շատ էլ չեմ ծիծաղում, այլ խղճում ենք և յիշում Կրիլովի «Տեսէք քոթոթն որ քան քաջ է, որ փղի գէմ ալ կը հաչէ» խօսքերը: Այդ էլ մի ուսանող է, որի փափագն է եղել խոշոր տառերով իր անուն-ազգանունը զրոշված տեսնել... և նա հասաւ իր մուրազին: Ժամանակ է որևէ կերպով անուն վաստակել. չէ՞ որ «Երկիրը» հէնց այդ պատճառով է կարողանում իր գոյությունը պահել:

Ապա Սլաքը:

Ա՛յ դու խորամանկ: Որպիսի բանաստեղծական շարադրություններով ես օյինաղությունները անում: Ես ու իմ Աստուածը, «Երկրի» մէջ էլի թուք ու մուրը քո երեսին. բաւականի մուրը կաշի ունիս: Դուցէ դու էլ ես տերցություն արել (մեղքս ինչ թաղցնեմ, հոտը փչում է):

—Հեռանում են, հեռանում են. մօտենում են, մօտենում են. գնում են, գնում են. գալիս են, գալիս են. վերադարձնում են, վերադարձնում են...

Ահա այս գայդի արընդէն էլ Սլաքի փոքրիկ գլեի մեծ թեթև օսլիկութիւններն են, որոնցով «Երկրի» զեկավարները ցատկոտելով կամենում են այդ համեմներով հովանալ և վառված սրտերը իւղ քսել:

Ախաբ ձեզ ոմ է ասել այնքան տաքտեղ ուտէք, որ գիշեր-ցերեկ անդադրում հնարների և գիտերի եռեռներից քարշ գայիք: Գոնէ հարցնէիք ձեր փորձված մտերից, որ այդքան կսկծոցներից ազատ մնայիք: Բա հեշտ է փղի գլխին միշտ ընկղմող կոտրելը՞:

Չէ, թեթևսօլիկութիւնն է՞ մի բան չէ և միշտ չէ կարելի գործադրել: Պ. Սլաք, բարեհաճեցէք մի աւելի ուրիշ և ուժեղ միջոց, նոր մէջոց հնարել: Ստախօսության զրպարտության, հայհոյանքի, թեթևսօլիկության վրա յոյս դնել անմտություն է. նրանք դատապարտում են ձեզ: Դուք մի այնպիսի դժուարին գործ էք ձեռնարկել, որ երբէք չէք կարող հասնել. ձեր միջոցները թոյլ և անզօր են: Հերոսատաք լինելու համար պէտք է լինել հերոսատաք ուղղակի և՝ ոչ թէ «ազգասիրության» դիմակի տակ թաքնվել ու «տանջված ժողովրդի պաշտպան» հանդիսանալ. ես ասում եմ, այլապէս դուք չէք հասնի, որովհետև ձեր չարաճճիությունները այժմ խստագնիքնությունի կատարի և երևան հանի արդարությունը:

Տարօրինակ է ձեր վարմունքը: Դուք Հայ-

ՈՒԿՐԱՅՆԱՅԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԼԱՏՖՕՐՄԸ

«Страна» լրագրին հաղորդում են, որ մօտ օրերս կայացել է Ուկրայնայի արմատական-դեմոկրատական կուսակցության նահանգական կոմիտեների պատգամաւորների համագումարը: Կուսակցությունը կոմիտեներ ունի Կիէվում, Պալտաւայում, Զերնիգովում, Օդեսայում, Եկատերինօսլավում, Խարկովում, Եկատերինոդարում, Պետերբուրգում և մի քանի գաւառական քաղաքներում: Այդ համագումարում վերանայվել են կուսակցության ծրագիրն ու կանոնագրությունը, որոնց մէջ կատարվել են մի քանի փոփոխություններ: Ի միջի այլոց կանոնագրության մի կէտը պարտաւոր է համարում կուսակցության անդամներին չը մասնակցել ուրիշ կուսակցություններին:

Առաջիկայ ընտրությունների վերաբերմամբ համագումարը որոշել է՝ ա) գաւառական քաղաքներում կազմակերպել կուսակցական ընտրողական կոմիտեներ, բ) յարաբերություն սահմանել գիւղական ազգաբնակության հետ և բացատրել նրանց կուսակցության տաքտիկան և նպատակները:

Համագումարը մերձաւոր քաղաքական պլատֆորմ է ընտրել կուսակցության համար՝

1) Կազմել Դումայի առաջ պատասխանատու մինիստրություն:

2) Ներում (ամնիստիա) քաղաքական և տպագրական յանցանքների համար հալածանքի ենթարկվածներին:

3) Վերացնել մահվան պատիժը ընդմիշտ:

4) Վերացնել ամեն տեսակ արտակարգ օրէնքները, դատարանները և դրությունները (սաստկացած և արտակարգ պահպանությունները և զինուորական դրությունները).

5) Ապահովել անձի, ընակարանի անձեռնմխելիությունը, նոյնպէս և խօսքի, մամուլի, ժողովների, դաշնակցությունների և դաւանանքի ազատությունները:

6) Սահմանել առանձին անհատների և ազգերի մէջ իրաւունքների հաւասարություն:

7) Պատասխանատու դարձնել դատարանի առաջ սովորական կարգով, համաչափաւոր միւս քաղաքացիների հետ անխտիր, իշխանության բոլոր գործակալները ապօրէն գործողությունների համար:

8) Մտցնել ընդհանուր տարրական կրթություն և գպրոցը ազգայնացնել Ուկրայնայում:

9) Բարենորոգումներ մտցնել զեմստվային և քաղաքային ինքնավարությունների մէջ ժամանակից դարձնելով տեղական ամբողջ ազգաբնակությունը հաւասարապէս:

10) Լուծել ազրարական հարցը կուսակցության ծրագրի հիման վրա (հիմնել հողային ֆոնդ աշխատաւոր հողագործ ազգաբնակության յատկացնելու նպատակով):

11) Ապահովել բանւոր դասակարգի շահերը օրէնսդրական ճանապարհով. գործադուլների և պրոֆեսիոնալ դաշնակցությունների ազատություն, բանւորների ապահովագրություն, աշխատանքի օրվայ կրճատումն և միջոցներ ժանուկների և կանանց աշխատությունների հսկողության համար:

12) Վերացնել ազարդիւն պետական ծախքերը և բարեփոխել հարկային սիստեմը:

13) Վերանայել հիմնական օրէնքները և նրանց միջոցով ապահովել Ուկրայնայի ինքնավարության իրաւունքը:

14) Սահմանել ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի ընտրական իրաւունք, առանց դաւանանքի, սեռի և ազգության խտրության՝ Պետական Դումայի ընտրությունների համար: («Страна»)

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

«Մշակի» № 248 համարի մէջ դուք զետեղել էք մի նամակ, ուր նկարագրելով վեհարանում կատարված միջադէպը, կոչ էք անում հայ ազգին, եթէ նա գոյություն ունի (?), որպէս զի քննություն կատարի և երևան հանի արդարությունը:

Տարօրինակ է ձեր վարմունքը: Դուք Հայ-

բալտական դիւանի խորհրդի անդամ էք ընտրված Էջմիածնի միաբանութեան կողմից, դուք վեհարանում ձեր հոմախոհների հետ ստեղծել էք միջնադէպը միաբանութիւնից իբր ձեզ տուած իրաւունքների վրա յենվելով և նրա անունից. դուք շատ լաւ գիտէք, որ Էջմիածնի միաբանութեան, եթէ ոչ բոլորին, գոնէ նրա բանիմաց մասի մէջ վրդովմունք է տիրում կատարված դէպքի առիթով, ձեզ յայտնի է, որ միաբանութիւնից 5 հոգի գրաւոր դիմել են Սուրէնեան տրքեպիսկոպոսին, որ տրտակարգ միաբանական ժողով գումարի, որպէս զի միաբանութիւնը հնարաւորութիւն ունենայ այդ ազեղ և վերին ատեանի անհանոյ դէպքի մասին իր կարծիքը յայտնել գիտէք նաև, որ այդ ժողովը մեզ անյայտ պատճառով ձգձգվում է. այս բոլոր ձեզ յայտնի է. ինչով բացատրէք ձեր վարմունքը, որ դուք փոխանակ անձամբ պահանջելու միաբանական ժողով, փոխանակ ձեզ ընտրողների առաջ նախ արդարանալ ուզելու, անտես էք անում նրանց և հեղինէրէն դիմում էք հայ ազգի դատարանին, որի գոյութիւնը կասկածելի էք համարում։

Մենք այդ բացատրում ենք նրանով, որ այսպեղ, միաբանական ժողովում դուք արդարանալ չէիք կարող (ուստի և խոյս էք տալիս), քանի որ միաբանութիւնը ձեզ որևէ արտօնութիւն չէ տուել խառնվել Կաթողիկոսի կարգադրութիւնների մէջ, քանի որ ձեզ համար էլ պարզ չէ եղել, թէ միաբանութիւնը խորհրդի անդամ ընտրելով ինչ չափ է որոշել գործունէութեան (անշուշտ յիշում էք միաբանական վերջին ժողովում ձեր խօսքերը) և այս լաւ գիտակցելով ձեռքներդ գըցում էք հայ ազգի փեշերին։

Այո, ազգը պարտական է քննութիւն կատարել, այս դուք չը պէտք է խնդրէք, այլ նա ինքնաբերաբար պիտի անէ, եթէ չէ կամենում իր գլխին նստած տեսնել փոխանակ կամարիլլայի, կազմակերպված օլիգարխիա, բայց դուք և ձեզ հետ միջնադէպ ստեղծողները պէտք է միաբանական ժողովին պատասխան տայիք ձեր արարքի մասին և լսէիք նրա դատավճիռը։

Այս էր պահանջում ձեր անմիջական պարտաճանաչութիւնը։

Սակայն ձեր մէջ պարտաճանաչութիւն գտնելու համար պէտք է մանրադիտակով զինվենք։

Մատթէոս վարդապետ

Ս. Էջմիածին

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

(Նամակ խմբագրութեան)

—

«Երկիր» լրագրի № 37-ում Վ-ն ձգտում է ապացուցանել, որ բժիշկ Բ. և ընկ. պատրաստ են անձնական հաշիւներից զրկված զոհել ամբողջ ժողովրդի կեանքը, գոյքը և նոյն իսկ պատիւը, որ 56 հոգու ստորագրութեամբ յայտարարութիւնը սև ապերախտութեան մի գործ է։

Իրողութիւնը այս է, որ պատահաբար մամուլի մէջ մած այդ փաստաթղթին ստորագրել են ոչ թէ 56 շուշեցիներ առհասարակ, այլ 80 հոգուց բաղկացած լիազօրներ, ուրանցից 10 հոգուց աւելի մարդիկ քաղաքից բացակայ էին. 59 լիազօրներ։

Դա ժողովրդի կամքի արտայայտութիւն էր։ Հեղինակը միամիտ կերպով ասում է, որ մեղադրում է ոչ բոլոր ստորագրողներին, որովհետև նրանք չը գիտէին, որ այդ փաստաթուղթը լոյս կը տեսնի ժամուի էջերում, բայց մէթէ պէտք է վախենալ հրապարակի վրա դրվելուց։ Այնուհետև, ի միջի այլոց, նա վկայում է, որ ներկայ հանդամանքներում դժուար չէ, նոյնիսկ շահաւէտ է (?!) պայքար մղել Դ-ն դէմ, որովհետև կառավարութիւնն էլ է նրան հալածում։

Յօդուածի հեղինակին պէտք է յայտնի լինի որ յայտարարութեան ստորագրողները երեխաներ չեն, որ նրանք գնահատում էին ժողովրդի կեանքի ու պատուի համար մարտնչողների մատուցած լաւ ծառայութիւնները, բայց և միևնոյն ժամանակ անընդհատ մատնացոյց էին անում կազմակերպութեան պակասութիւնների և մի ամբողջ շարք ապօրինութիւնների վրա, որով նրանք ի չարն էին գործադրում իրանց ձեռքն ընկած իշխանութիւնը, և այն վայրերի բռնութիւնները, որոնք վերջին ժամանակներս պանդէմիայի բնաւորութիւն ընդունեցին։

Դեկավարների ինքնահաւանութիւնը, նրանց ծարաւը իշխելու ժողովրդի վրա և մըտաւորապէս թոյլ զարգացումը, ժամանակակից պայմանների չնորհիւ, պատճառ եղան բռունցքի իրաւունքի ճոխ ծաղկելուն։

Մաքուր գաղափարի վարդմի ծառայողները հարկադրված էին հեռանալու, և կազմակերպութիւնը այլասերվեց ու դառաւ ֆանատիկոսների մի հերձուած որը զարգացրեց մի ողորմելի աշխարհանացաց։

Նրանց կարծիքով հայ ժողովուրդը զոհել է արդէն և այժմ ստացվել է երկու խաւ. մէկի մէջ մտնում են այն բոլորը ինչ որ մաքուր է ու ազնիւ, որոնք դաւանում են Դ-ը, իսկ միւսի մէջ ստոր երկչոտների ապերախտ մասսաները, որոնք իրանք են մեղաւոր իրանց թշուառութեան և աւերածութեան համար։

Ինքնակալական ոճով նրանք ասում են. Մենք ընդունեցինք կառավարութեան դեկը, մենք կազմակերպեցինք ժողովուրդը, մենք յաղթեցինք, մենք ուզում էինք ժողովուրդին շնորհել իրաւունքներ, բայց նա դեռ ևս ինքնագիտակցութեան չէ հասել և մենք շարունակում ենք իշխանութեան լուծի ծանրութիւնը մեր վրա կրել։ Նրանք իրանց օրգանի համարներից մէկում հանդիսաւոր կերպով ժողովրդին թղթէ սահմանադրութիւն շնորհեցին, հոկտեմբերի 17-ից յետոյ հայերի հաշով երրորդը արդէն։

Այդ սահմանադրութիւնները տեղում էին ժողովրդի վրա յարդառատ կերպով, բայց նա իւրաքանչիւր անգամ անարժան ու անպատրաստ էր հանդիսանում։ Եւ եթէ նրա ներկայացուցիչները իրական երաշխաւորութիւններ են որոնում, մարդում են ինքնակոչ և անասուն (доморощенныя) բիւրոկրատներին, նրա մոլեռանդութիւնը և հաշիւ պահանջումներանցից, նա նրանց անուանում է ապերախտներ, վախկոտներ... Նրանք իրանց յոյսը դրել են ժողովրդի անկարողութեան վրա, այսինքն որ նա կը դիմէ իրան և հնազանդութիւն կը յայտնէ։ Իզուր չէ, որ նրանք նրան ստրկացրել են, ահաբեկել ու անբարոյականացրել։

Փոխանակ իւրաքանչիւր քաղաքացու ներշնչելու այն միտքը, որ ինքնապաշպանութիւնը նրա սրբազան իրաւունքն է ու պարտականութիւնը և նպաստել նրա կազմակերպվելուն ժողովրդի ամենայտ ընկած խաւերի մէջ անգամ, նրանք պատուաստել են նրան միլիտարիզմը, վերապահելով այդ ֆունկցիաները վարձկաններին, որոնք յետ մնալով խաղաղ աշխատանքից, զարգացրել են բիրտ բռունութիւնների մթնոլորտը։

Մենք յոյս ունենք, որ ժողովրդի առողջ միտքը վերջապէս կը յաղթանակէ, որ իրանից դէն կը ձգէ ստրկութեան ամեն տեսակ շղթաները և ինքը իր գլխի տէրը կը դառնայ։

Բաւական է, քաշեցէք ձեր ձեռքերը։

Թող ժողովուրդը ինքը ընտրէ այն մարդկանց, որոնց նա յանձնելու է իր ճակատագրի դեկավարութիւնը։

Բ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Գանձակ, նոյեմբերի 15-ին

Նոյեմբերի 14-ին հաղորդելով Փիր գիւղացի Գասանակերեանի և Բաբանի անհետանալու վերաբերեալ լուրը (լուրը սխալմամբ տպված է նոյեմբերի 4-ից), ես նոյն օրը հեռագրեցի որ չը ապէք։

Այժմս շտապում եմ նամակով ուղղել այդ ոչ ցանկալի սխալը։

Կորիւն վարդապետն երբ լսում է այդ լուրն, անմիջապէս ուղևորվում է գնդապետ Սօֆօնովին յայտնելու. ճանապարհին նրան յայտնում են, որ գիւղացիք գտնվում են Գանձակի կայարանում։

Իսկ մինչ այդ ես այդ լուրը բաց նամակով պօստ ձգած էի։

Աւ. Սահակեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրը թոյլատրել է, որ նաւթարդիւնաբերողները իրանց համագումարը կայացնեն Բաքւում, նոյեմբերի 27-ին։

—

Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ Անդրկովկասի երկաթուղային ճանապարհի ճիաթուրի ճիւղի վրա անցնող գնացքների վրա աւազակները յարձակումներ են գործում, որոշված է վերացնել պօստատար գնացքների երթևեկութիւնը գիշեր ժամանակ այդ գծի վրա՝ փոխարինելով ցերեկով։

—

Զը նայելով որ արդէն անցել է այն ժամանակամիջոցը, որի ընթացքում կարելի էր ծանուցումներ ներկայացնել՝ Պետական Դուումայի ընտրութիւններին մասնակցելու վերաբերեալ, բայց և այնպէս քաղաքային վարչութիւնը շարունակ նոր յայտարարութիւններ է ստանում զանազան հաստատութիւններից Այսպէս օրինակ, երեկ ստացել է անօնիմ ընկերութեան, Թիֆլիսի 4-րդ իգական գիմնազիայի և Սիօնի տաճարի ծառայողների ցուցակները։

—

Երէկ, ճաշից յետոյ 2 և կէս ժամին, Պուշկինսկայա փողոցի վրա գտնվող ձկնավաճառ Ղուկասեանի խանութի վրա են յարձակվում 8 չարագործներ՝ թալանելու նպատակով։ Չարագործներին դիմադրուելուն ցոյց տալով խանութի ծառայողները և կողմնակի անձինք, չարագործները ատրճանակների հարուածներով վիրաւորում են մի զորձակատարի և մի կողմնակի մարդու։ Ոստիկանութիւնը վրա հասնելով՝ հրացանազարկ է անում չարագործներից երկուսին, իսկ երկուսին էլ ձերբակալում է. մնացածները փախչելով ազատվում են։

—

Նոյեմբ. 15-ին, առաւօտեան ժամը 10-ին, Աբաս-Աբադեան տուպիկում, Շաղինօվի տան կեցող Տիգրան Մելիք-Շաղինօվի ընկերանին են մտնում—վերջինիս բացակայութեան ժամանակ—երկու անյայտ երիտասարդներ և Շաղինօվի մօրից փող են պահանջում։ Իսկ երբ տիկին Շաղինօվը սկսում է ազազակ բարձրացնել, անյայտները շտապում են փախուստի դիմել, թողնելով ֆիզիկական երկու դանակներ։

—

Նոյեմբերի 14-ին, գիշերվայ ժամը 11-ին Սուրբ-Մէնասի փողոցով անցնող Նամակաբաշխ Մալիքեանի վրա յարձակվում են երեք անյայտ անձինք, որոնք դիտմամբ նրա հետ վէճի են բռնվում, որի ժամանակ խլելով նրա ձեռքից դեռ ևս չը բաժանված ծրարները կապոցը, անյայտանում են։

—

Նոյեմբերի 18-ին, երեկոյեան ժամի 9-ին, Մելիկովսկայա կոչվող փողոցում Դանիել Ֆամէկոի հետ խօսակցելու ժամանակ Կովկասեան 1-ին հրացանաձիգ գնդի ունտեր-օֆիցեր Պոգօլսկին իր մօտ եղած շտիկով Ֆամէկոին վիրաւորում է ձախ սրտից։ Վիրաւորվածին տարել են Միքայէլեան հիւանդանոցը

—

Օլօլակի ջրանցքում բռնվածներից Սարգիսն Սիխարուլիձէն երէկ կախվել է։

—

Կայսաէի սպանութեան մէջ մասնակցող Նիկոլա Կոխաձէն, որը 4 օր ու գիշեր շարունակ թաքնվում էր ջրի խողովակում, Թիֆլիսի գենը-նահանգապետի կարգադրութեան համաձայն յանձնված է զինուորական-դաշտային դատարանին։

—

Մուխրանեան կամուրջի կառուցման առիթով ձգնաւոր Արշակ Բաբովից ստացված է հետևեալ հեռագիրը. «Բրնանկի գործարանը համաձայն է կառուցանել կամուրջը՝ պետական բանկի տոկոսաբեր թղթերից վարձատրութիւնը ստանալով 3—4 տարուց յետոյ»։

—

Զանազանները Սօսինը և Օստրօգորսկին յայտնել են քաղաքային վարչութեան, որ հիւանդութեան պատճառով անկը ըող են յանախել Դումայի նիստերին, իսկ ձգնաւոր Տիգրանեանը բոլորովին հրաժարվել է ձգնաւորութեան կոչումից։

—

Թիֆլիսի քաղաքային խորհրդի ձգնաւոր Ս. Ա. Սուլթանեանը քաղաքագլխի պաշտօնակատարին ներկայացրել է մի յայտարարութիւն, որով վերցնում է իրանից Դումայի ձգնաւոր լինելու կոչը։

—

Գեներալ Գօլօշչապովի մահափորձի մասին խօսելով՝ «Իրշադը» հաղորդում է, որ նրա մահափորձի լուրը խկոյն հասել է Բագու և հասարակութեան մէջ լայն ծաւալ ստացել։ Շատերը դիմել են «Իրշադ»-ի խմբագրութեան հարցնելու համար, որ քաղաքում Գօլօշչապովի սպանութեան մասին տարածված շշուկները ճիշտ են։ Հետևեալ օրը հեռագրական գործակալութիւնը հաղորդել է լուրը, որ մեծ դժուարութիւն է պատճառել։ Բագուի թուրք լրագրի հաղորդելով՝ թուրք սոցիալ-դեմօկրատական «Հիւմմէթ» կուսակցութիւնը մի թռուցիկ է բաց թողել յիշեալ մահափորձի առիթով։ Իսկ մի թռուցիկ թուրքերէն և ռուսերէն լեզուով, «Դիֆայի» մուսուլման կուսակցութեան կողմից հրատարակված, որի այդ կուսակցութիւնը յայտնում է, թէ գենեռալ Գօլօշչապովի մահափորձի հեղինակը ինքն է, և դրանով նա կամեցել է վրէժ լուծել այն ազատ կողմնապահութեան համար, որ նա ցոյց է տուել Ղարաբաղում մուսուլմանների վերաբերմամբ։

—

Հաւլաբարցի Կոտարինէ Ներսէսօվը և Մարթա Սարգսեանը գեներալ-նահանգապետից 25-ական ռուբլի տուգանքի են ենթարկվել—գիշերները փողոցի լապտերը չը վառելու համար։

—

«Իրշադը» հաղորդում է, որ մուսուլմանների «օրուջ-բայրամի» ժամանակ վիրաւորվում է Երևանի ականաւոր մուսուլմաններից մէկը Իբրահիմ-բէկ Կասումբէկօվը։ Ներկայումս Իբրահիմ-բէկը առողջանալով, մասնակցել է 4 մուսուլմանների վրա, որոնք արդէն ձերբակալված են։ Հէնց նոյն Իբրահիմ-բէկը կազմել է յատուկ ռազմախումբ՝ կուռելու դուրս գալու մնացած ռազմիկ խմբերի դէմ։ Մէջլիսները են ձեռք առնվում՝ մտքերը խաղաղացնելու համար։

—

Նոյեմբերի 15-ին, երեկոյեան ժամը 7-ին, ս. Մինասի փողոցով անցնող Սերգէյ Յարութիւնեանի վրա յարձակվում են 2 անյայտ չարագործներ և բռնութեամբ խլելով նրա արծաթէ գօտին—50 ռուբլու արժէքութեամբ, անյայտանում են։

—

Թիֆլիսի գենը-նահանգապետի կարգադրութեան համաձայն Սգնախի գաւառի 392 մարդիկ զատապարտված են բանտարկութեան մէկ ամիս ժամանակով, նշանակված տեղերում ձիաների զինուորական ցուցակագրութեան համար ձիաներ չը հասցնելու համար։

—

Գօրու գաւառի Տղոցա գիւղի 12 ծուխերը աքսորվում են գեներալ-նահանգապետութեան սահմանից դուրս, նոյն գիւղում 3 ստրաժնիկների սպանելու պատճառով։ («Кавк.»)։

—

Մօտ օրերս Բագուում բանտարկել են մի քանի բեալիստ մահմեդականների, որոնք մեղադրվելիս են եղել թռուցիկներ տարածելու մէջ։ Բէալական դպրոցի վերատեսչի խնդրանօք այդ աշակերտները ազատված են բանտարկութիւնից։

—

Սպանված Գ. Է. Բէրնդսի փոխարէն, ինչպէս հաղորդում են «Т. Л.»-ին, Անդրկովկասի երկաթուղիների երթևեկութեան կառավարիչ նշանակվում է ինժ. Բուդէնկօն, որը այժմ վարում է գլխաւոր վերահսկիչի պաշտօնը։

—

Գանձակի նահանգապետը միջնորդութիւն է յարուցել Կովկասի Փոխարքայի առաջ երկաթ հետևակ ստորին կարգի պահակներից 6 ամիս ժամանակով Զազալի գիւղին կից վաճառական Նիկոլայ Արաքելօվի կալուածքում պահակատեղի հաստատել—Արաքելօվի կալուածքը պաշտպանելու և կալուածքում ծառայողների անձնական ապահովութեան համար, բոլոր ծախքերը դնելով կալուածատիրոջ վրա։

—

Բագուից հաղորդում են «К. Р.» լրագրին, որ մօտ օրերս այնտեղ է ժամանել Ռուսաստանի մահմեդականների մէջ յայտնի դեներալ Շեյխ-Ալին։ Նրա Բագու գալու նպատակն է նուէրներ հաւաքել Պետերբուրգում հիմնելիք մահմեդականների ջուամ-մէչեղի համար։

—

Ինչպէս հաղորդում է «О. Б.»-ն, «Кавказъ и Меркурій» ընկերութեանը առևտրի և արդիւնաբերութեան մինիստրը թոյլատրել է—վաճառականը ստանալը դիւրացնելու համար իրրև սեփականութիւն կամ կապալով ձեռք բերել նաւթատարիչ հողաբաժիններ, արտադրել նաւթ, հիմնել սեփական նաւթային պրօմիսլաներ, ինչպէս և կապալով վերցնել այդպիսիները մի երրորդ անձնաւորութիւնից, ընդհանուր օրենական հիմունքներով, և բանալ պահեստներ և պահեստատեղիներ, ինչպէս նաւթի, այնպէս և նաւթային մթերքների համար։

—

Գանձակից գրում են, որ տեղական կլասիքական գիմնազիայի վերատեսուչ Ստարիցկին և նոյն գիմնազիայի տեսուչ Շանմուրզանովը, լուրերին նայած, հրաժարվում են իրանց պաշտօններից։ Տեղական նահանգական դատարանի քարտուղար Մ. Բ. Մելիք-Շանազարեանը նշանակված է Տօտսկի գաւառի հաշտարար դատաւոր։

—

Բաթումի գենեռալ-նահանգապետի հրամանով դադարեցրած է տեղական «Զէրնօմօրսկի Վէստնիկ» լրագիրը Բաթում քաղաքի և Բաթումի շրջանի զինուորական դրութեան ամբողջ ժամանակ։

—

Նոյեմբերի լոյս 13-ի գիշերը մի աւազակախումբ յարձակվել է Շիսմարինսկի վանքի վրա։ Բոլոր յարձակվողները եղել են մօտ 16 ամեայ պատանիներ և ունեցել են փոքրիկ սայլակներ, որոնց վրա քարձում են միայն մի քանի տակառ մեղր։ Այն ժամանակ, երբ չարագործները սկսել են բեռնել իրանց կողոպուտը, խուցերից մէկից պատահմամբ երևում է եպիսկոպոս Ալէքսանդրի ծառայ Մակսիմի գլուխը, որը անմիջապէս տեղնուտեղը զոհ է գնում չարագործներից մէկի անողորմ դնդակին։

—

Ախալցխայի կապալառու Մկրտիչ Բախչինեանը յայտնել է 3-դ թաղամասի պրիստաւին, որ նոյեմբերի 15-ին, առաւօտեան ժամը 7-ի գնացքով գալով Թիֆլիս, կայարանում մօտնեում է նրան անյայտ մի անձնաւորութիւն և առաջարկում է Թիֆլիսում վարձել Շադինովի հիւրանոցը։ Բախչինովը համաձայնվում է։ Հիւրանոցում անյայտը Բախչինովին առաջարկում է գնալ թէյ խմելու և անցնելով այդ անյայտ մարդու հետ—Բախչինովը նկատում է, որ նրանց առաջ մի փակ է ընկնում և սկսում է աղաղակել։ Բայց անյայտը նրան խորոտրդ է տալիս լռել և կիսել գտնված փողերը։ Մի փոքր ժամանակից յետոյ նրանց է մօտենում փող կորցնողը և պահանջում է վերադարձնել։ Խուզարկելով Բախչինովին և գտնելով նրա մօտ 445 ռ. փաթաթած թաշկինակը, կորզում է նրանից և առաջին անյայտ անձի հետ անյայտանում։

—

«Մշակի» երեկվայ համարի մէջ (№ 252) տպված «Բաղաքական տեսութիւն» յօդուածում մի սխալ է սպրդել։ Տպված է՝ «Կլեմանսոյի մինիստրութիւնը պրինցիպիական ընդդիմադրութիւն ցոյց չի տայ Կլեմանսոյի մինիստրութեան»։ Պէտք է լինի՝ «Ժօրէսի կուսակցութիւնը պրինցիպիական»... և այլն։

—

Զօրամասերին ոստիկանական ծառայութիւնների համար ծառայեցնելու հարցը, ինչպէս ասում են, վճռվելու է այն մտքով, որ զօրքերին չը պէտք է շրջել իրանց ուղղակի պարականութիւններից ու պարականութիւններից, իսկ ոստիկանական ծառայութիւնը վարելու համար պէտք է աւելացվի ժանդարմների կօրպուսը և ձիաւոր ոստիկանութիւնը։

—

Պետերբուրգի շրջանի պատուաւոր հաշտարար դատաւոր բարօն Ֆ. Բ. Շտէյնգելը օրինական պատասխանատուութեան է ենթարկվում։ Նա մեղադրվում է Պ-բերգի կոչը տարածելու համար։ Իբրև նախնական միջոց նրա դէմ դատադրված է այն՝ որ արգելել են հեռանալ իր ընակավայրից։

—

Յայտնի «44 անձանց գործը», որոնք մեղադրվում են Պետերբուրգում զինված ապստամբութիւն նախապատրաստելու համար, քննվելու է դեկտեմբերի 1-ին Պետերբուրգի դատաստանական պալատում։

—

«Բսկական ռուս մարդկանց» լրագրներին մերժել են կառավարական նպաստներ տալ։ Բացառութիւն է միայն արված «Զօրկա» լրագրի խմբագիր Եարմոլինկի համար, որին տուել են 19,000 ռուբլի։ Այդ փողերը ներքին գործերի մինիստրը փոխադրել է ցենզուրական կոմիտէին, իսկ վերջինս էլ տուել է իշ. Ն. Ուրուսօբին, ստորագրութեամբ, Եարմոլինկին յանձնելու համար։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

15 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 նոյեմբերի։ Անկախ Բարձրագոյն առանձին հրամանով—համակայսերական եկեղեցական համագումարում վերաց եկեղեցու աւտօկֆալութիւնն (ինքնագլխութեան) հարցի առաջիկայ քննութիւնից, Սինոդը մի շարք միջոցներ է ուրուագծել էքզարխութեան հոգևոր դպրոցների և եկեղեցական կառավարութիւնների բարեկարգութեան վերաբերեալ. 1) էքզարխութեան թեմական առաջնորդների լիակատար իշխանութիւնը վերականգնելու նպատակով հէնց այժմ և եթ վերականգնել Իմերէթի, Գուրիա-Մինգրելիան և Սուխումի թեմերը ինքնուրոյն ու անկախ. բոլոր անկախ եպիսկոպոսներին կից կազմել թեմական վարչութիւններ։ Վերականգնել վարչական սինոդալի գրասենեակը, որպէս զի նա մըշտական երեք անդամների կազմով կապարէ հոգևոր կօնսիսթորիայի ֆունկցիաները էքզարխութեան կից, իսկ բոլոր եպիսկոպոսների կազմով—որոնց կոչել գրասենեակի անդամներ, Վրաստանի էքզարխի նախագահութեամբ՝ էքզարխութեան բոլոր թեմերի վրա հսկող եկեղեցական հաստատութեան ֆունկցիաները։ Գրասենեակի անդամները էքզարխից հրաւիրվում են հարկ եղած դէպքում տարին երկու կամ երեք անգամ։

ՀՌՕՄ, 15 նոյեմբերի։ Ցունաց թագաւորը նոյեմբերի 14 ին մեկնեց։ Կայարանում նրան ճանապարհ դրեց իտալական թագաւորը։

ՎԱՐՇԱՎԱ, 15 նոյեմբերի։ Ըստ պաշտօնական տեղեկութիւնների երկկ բռնված է Լեհաստանի և Լիտվայի սոցիալ-դեմօկրատական կուսակցութեան 8 անդամից բաղկացած բիւրօն։ Գտնված է գաղտնի տպարան Կրակովսկի արուարձանում։ Ձերբակալված են 4 հոգի։

ՇԱՆԽԱՅ, 15 նոյեմբերի։ Օտարազգիների ներկայացուցիչների միջազգային կոմիտէը դիմել է Եւրոպային և Ամերիկային, խնդրելով օգնել սովի դէմը հասած Կանգ-Սու նահանգի հիւսիսային մասի 10 միլիոն ազգաբնակութեան, որի բերքը բոլորովին ոչնչացել է ջրհեղեղից։

16 նոյեմբերի

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ, 15 նոյեմբերի։ Առաւօտեան, Կօզաչի կոչված փողոցում գտնված անձանց մի խումբ յարձակվել է քաղաքական չորս յանցաւորների ուղեկցող պահակախմբի վրա։ Յարձակման ժամանակ չորսն էլ փախուստի են դիմել և անյայտացել։ Պահակներից մէկը վիրաւորված է։

ԽԱԲԱՐՕՎՍԿ, 15 նոյեմբերի։ Ութ հոգուց բաղկացած կօրեացի ընտանիքն մորթելու համար ութ չէնացիներ զինուորական դատարանի վճռով կախվել են։

ԼՕՆԴՕՆ, 15 նոյեմբերի։ «Դէյլի-Մէյլի» խօսքերով, վերջին 3 ամսվայ ընթացքում Անտանտէրպէնից կենդ պատուիրակն է մացված կրուպպի 12 խոշոր թնդանօթներ, որոնք տեղադրուելու է Լատօի բայնի ամրութիւններում։

ՄՕՍԿՎԱ, 15 նոյեմբերի։ Պալատի առանձին ատեանում դասային ներկայացուցիչների մասնակցութեամբ սկսվեց դեկտեմբերեան զինված ապստամբութեան գործի քննութիւնը։ Մեղադրվում են 32 մարդ։ Մեղադրանքը ներկայացվել է քրէական պատժագրքի 1140 և 1454, 100-րդ յօդուածների համաձայն։ Վկաների թիւը 400-ից անցնում է. շատերը բացակայ են։ Մեղադրական ակտը բաղկացած է 100 տպագրական թերթից, որի մէջ ժամանակագրական կարգով առաջ են բերված յեղափոխական կուսակցութիւնների և ռազմիկ խմբերի կոչերը և որոշումները, որոնցով կոչ է անվում զինված ապստամբութիւն։ Ակտում խօսվում է նաև Մօսկվայում դեկտ. 7-ից մինչև 29-ը կատարված ահաբեկիչ գործողութիւնները։

ԲԷԼՕՍՏՕԿ, 15 նոյեմբերի։ Թաղային վերանայիչի կեանքի դէմ մահափորձողը պատերազմա-դաշտային դատարանի վճռով դատապարտվել է մահվան պատժի, որը հէնց այսօր ի կատար ածվեց։ Ցանցաւորը վերջին շնչի ժամանակ էլ հրաժարվեց իր ոճրագործութիւնը։

ԹԷՈԴՕՍԻԱ, 15 նոյեմբերի։ Գեներալ Դաւիդովի կեանքի դէմ մահափորձողը պատերազմա-դաշտային դատարանի վճռով այսօր կախվեց։

ՎԱՐՇԱՎԱ, 15 նոյեմբերի։ Բէլզ քաղաքանութեան կուսակցութեան ներկայացուցիչների նախաձեռնութեամբ Վարշավա են եկել Լեհաստանի Թագաւորութեան մօտ 100 կուլուածատէրերը՝ երկրում ազրարային բարեկարգում մտցնելու մի նախագիծ մշակելու համար։ Նախագահ է ընտրվել Յովսէփ Օստրօվսկին։

ՊԵՏԵՐԹՈՒՐԳ, 15 նոյեմբերի։ Էստոնիայում, Վելիսկի գնդի կազակ Կոնակովը իր սիրուհու հետ տուն վերադառնալու ժամանակ, ճանապարհին մոռացել են թէ վերջինին, և թէ զինաթափ անելու ջանացող ընկերոջը։

ԿՈՆԳԱՆ, 15 նոյեմբերի։ Ցերեկով երեք անյայտ անձինք քարով խփելով վաճառական Տիֆանօվին և ուշաթափեցնելով, մորթում են նրան։ 2-ը ձերբակալված են։

ԽԱՐԿՕՎ, 15 նոյեմբերի. Գաղտնի խորհրդական Վաչտերի նախագահութեամբ բացվեց հարուր լեռնանաքատէրերի 31-րդ համագումարը։

ՕԴԵՍՍԱ, 15 նոյեմբերի։ Պարսից ծոցի նաւահանգիստներից տեղս եկաւ «Тигръ» շոգենաւը, որով Օդեսսա բերվեց մօտ 70 հազար պուդ բրինձ և ուրիշ շատ թանդագին ապրանքներ։ Առևտրական հաղորդակցութիւնը Օդեսսայի և Պարսկաստանի միջև օրէցօր ամրապնդվում է։

ԲԵՐԼԻՆ, 15 նոյեմբերի։ Բէյխստագում քննվեց Աֆրիկայի գաղթավայրերի համար յատկացնվելիք լրացուցիչ ծախքերի հարցը։ Բիւլովը մի ճառ արտասանեց, որի մէջ ցոյց տուեց, որ թշնամու ընդդիմադրութիւնը կարելի եղաւ կոտրել հրեքամեայ կուիվ յետոյ միայն. այդ գաղթավայրերից հրաժարվել անկարելի է. պահանջվում են խոշոր գումարներ կազմակերպութեան համար։ Բիւլովը գտնում է, որ յիրաւի, գաղթավայրերի մասին հոգալ վարչութեան մէջ ճգնաժամ է տիրում. սակայն, միաժամանակ անհրաժեշտ է գտնում, որ այդ գաղթավայրերի համար կազմվի մի յատուկ մինիստրութիւն և խոշորագոյն բարեկարգումներ մտցնել, և վատաւութիւն է խնդրում. մաժուլի գաղթավայրերի խայտառակ դէպքերի մասին հաղորդած լուրերը չապացուցած են. կառավարութիւնը մեղաւոր պաշտօնեաների վերաբերմամբ անողոք էլ կը լինի։

ՄԻՆՍԿ։ 15 նոյեմբերի։ Հրէական նախընտրական ժողովում վճռված է կազմել հրէա ընտրողների անկախ մի խմբակ, որը միացնէ այս կամ այն կուսակցութիւններից անկախ բոլոր հրէաներին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 նոյեմբերի։ Պաշտօնական Բարձրագոյն հաստատութիւն է գտել արտաքին գործերի մինիստրի առաջարկութիւնը բանալ գեներալ-հիւպատոսարան Մոսկվայում, հիւպատոսարան Դաշնիում, փոխ-հիւպատոսարան Կուանչէնգում հէնց այժմ և եթ, և գեներալ-հիւպատոսարան՝ Խարբինում և հիւպատոսարաններ՝ Գիրինում և Ցիցիկարում։

ՍԷՎԱՍՏՕՊՕԼ, 15 նոյեմ.։ Փորձ է եղել գուանալու պատերազմա-դաշտային դատարանի շրջանակում նոյեմբերեան ապստամբութեան գործի ըզգալիացման։ Գողութիւնը չէ ազդվել գլխաւորապէս այն պատճառով, որ շինութեան մէջ այդ ըսպէին եղել է քարտուղարը, որը չարագործներին փախուստի է դարձրել։

ԼՕՆԴՕՆ, 15 նոյեմբերի։ Լրագիրները ֆինանսական բաժնում ընդգծում են առևտրական գործերի կուրսի բարձրացումը։ Այստեղ և Պարիզում Ռուսաստանի ապագայի վրա նայում են աւելի լաւատեսութեամբ այն համոզմամբ, որ քաղաքական խռովութիւնների և խառնակութիւնների ամենասուր շրջանը արդէն անցել է և Ռուսաստանը բարեղեռութեամբ կը կատարէ իր ֆինանսական պարտականութիւնները։ Առաւելապէս բարձրացել է 4 %-ային բնական և նոր փոխառութիւնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 նոյեմբերի։ Նոյեմբերի 15-ին Մոսկվա-Վինդաւօ-Բիբինակ գծով ճանկնալ մեկնել է ճանապարհների հաղորդակցութեան մինիստր Շաուֆուսը՝ հարաւի երկաթուղագծերը դիտելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 նոյեմբերի։ Բանուորական օրէնսդրութեան նախագծերի քննութիւնը կայանալու է դեկտեմբերի 11-ին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒԻՀ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԻՍՆ

ԱՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԶԱԶԻՆ ՄԱՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Թ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Գուգկա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) ախտաբ. հ.։
Կ. Մ. ՁԻՆՕՎՅԱՆ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱԽԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վիրաբուժ. ին։
Զ. Ի. ԲԱՐՈՆԱՅԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձուքսաՀ կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳԶԵԼԻՆՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԶԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ե. Գուրդինով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկանաց։
Վճարը 50 կ.։ չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Զախարբէգեանց
ՄԱՍՆԱՓԻՏ